ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
(ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան

ՆԱԽԱԲԱՆ

Սույն հաշվետվությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Փաստաբանների պալատ**) 2022 թվականի **(այսուհետ նաև՝ Հաշվետու ժամանակահատված)** գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի 2022-2025 թվականների **ռազմավարության ծրագրի** (**այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր**) լույսի ներքո:

Սույն հաշվետվությունը բովանդակում է համապարփակ տեղեկատվություն Հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջառոցումների, դրանց արդյունքների վերաբերյալ՝ ամփոփելով Փաստաբանների պալատի տարեկան գործունեության արդյունքները:

Փաստաբանների պալատի 2022-2025 թվականների ռազմավարության ծրագրով նախատեսված են տվյալ ժամանակահատվածի համար Փաստաբանների պալատի ռազմավարական 16 ուղղություններ, որոնցով ներկայացված են այն նվազագույն և հիմնական նպատակները, որոնք դրված են Փաստաբանների պալատի առջև:

Սույն հաշվետվությամբ ներկայացվում է Փաստաբանների պալատի 2022 թվականի ռազմավարական ծրագրի կատարողականը և գործունեությունը՝ ոլորտային սկզբունքով առանձնացված գլուխներով:

I. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող մարմին է, որն ունի օրենքով սահմանված հստակ խնդիրներ, որոնց իրագործմանը պետք է ձգտի իր ողջ գործունեության ընթացքում: Կառույցի առջև դրված խնդիրները կատարելու համար անհրաժեշտ է, որպեսզի փաստաբանական համայնքը լինի միասնական և համախմբված:

Ինստիտուցիոնալ միասնականության բացակայությունը լի է կործանարար հետևանքներով, ընդհուպ՝ փաստաբանության հեղինակության և կարգավիճակի կորուստը:

Փաստաբանների պալատն իր ինստիտուցիոնալ միասնականության պահպանման համար անհրաժեշտ է համարել մշտապես հետևել հանրային կյանքի զարգացումներին, պետական մարմինների նպատակադրումներին և գործողություններին, ի հայտ բերել ինստիտուտի միասնականությունը խաթարող ոտնձգությունների վտանգները, ինչպես նաև արդեն իսկ առկա ոտնձգությունները, դրանց կանխարգելման և արձագանքման նպատակով բարձրաձայնել հնարավոր վտանգները, կազմակերպել հակազդման և դիմադրության միջոցառումներ՝ ապահովելով հնարավորինս ուժեղ համախմբում: Բացի այդ, Պալատը նպատակադրվել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որոնք կարող են նպաստել ինստիտուտի միասնականության ամրապնդմանը:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՔԱՅԼԵՐԸ՝ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

2022 թվականի ընթացքում փաստաբանական համայնքը կանգնել է լուրջ մարտահրավերի առջև:

Նույն թվականի մարտի 24-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) քննարկման է դրվել ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագծում առկա են եղել մի շարք խնդրահարույց կետեր, որոնց ընդունումը կարող էր խարխլել փաստաբանների պալատի ողջ ինքնավարությունը, միասնականությունն ու անկախությունը: Այս վտանգավոր հետևանքները կանխելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը տևական քննարկումների և կատարված ծավալուն աշխատանքի արդյունքում ներկայացրել

է խնդրահարույց կետերի վերաբերյալ փաստաբանական համայնքի միասնական և վճռական դիրքորոշումը:

««Փաստաբանության մասին» օրենքի փոփոխությունների նախագծից խնդրահարույց կետերը բացառելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվել են մի շարք քննարկումներ ՀՀ արդարադատության նախարարության, օրենսդիր մարմնի ներկայացուցիչների, «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչների և նշված օրենքի նախագիծը մշակող փորձագետների մասնակցությամբ:

Տեղի է ունեցել երկօրյա արտագնա հանդիպում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը, արդարադատության նախարարության, օրենսդիր մարմնի ներկայացուցիչները, փաստաբանները:

Կատարված մեծածավալ աշխատանքների և գործադրված ջանքերի շնորհիվ հաջողվել է հասնել նպաստավոր արդյունքի և կանխարգելել այն վտանգների և բացասական հետևանքների առաջացումը, որոնցով լի էր նախագծի ընդունումը:

Արդյունքում փոփոխության է ենթարկվել նախագիծը և հանվել են հետևյալ կետերը.

1. Փաստաբանների պալատի կառուցվածքում ստեղծվող կարգապահական հանձնաժողովի անհատական կազմում Արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավվում, կարգապահական հանձնաժողովին վարույթ հարուցելու և գործը նախապատրաստելու լիազորության վերապահումը:
2. Փաստաբանների պալատի կառուցվածքի վերահսկողական հանձնաժողովների ձևավորումը և դրանց անհատական կազմում Արդարադատության և Ֆինանսների նախարարությունների ներկայացուցիչների ներգրավվումը, վերահսկողական հանձնաժողովին Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման և հաշվետվողականության ապահովման միջամտության լիազորության վերապահումը:
3. Պալատի (բացառությամբ նախագահի և խորհրդի անդամների), ինչպես նաև դպրոցի մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց համար քաղաքական զսպվածություն դրսևորելու պարտականությունը:

2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվել է ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-366-Ն օրենքը, որով ծավալուն փոփոխություններ են կատարվել «Փաստաբանության մասին» օրենքում: Նշված օրենքի փոփոխմանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության մեջ և Փաստաբանի վարքագծի կանոնագրքում: Այդ նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի նախագծերը:

Տեղի ունեցած քննարկման ընթացքում, փաստաբանների կողմից հնչեցվել են կարծիքներ և առաջարկներ նշված նախագծերի վերաբերյալ, որոնք հավաքագրվել և ներկայացվել են Պալատի խորհրդին՝ դրանք Կանոնադրության և Կանոնագրքի նախագծերում ներառելու նպատակով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Փաստաբանության մասին» օրենքի փոփոխությամբ պայմանավորված անհրաժեշտ էր ձևավորել ՀՀ փաստաբանական պալատի կարգապահական հանձնաժողով և կատարել փոփոխություններ վերը նշված իրավական ակտերում՝ հրավիրվել և 2022թ. դեկտեմբերի 24-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը, որի օրակարգում ընդգրկված են եղել երեք հարցեր՝

1) ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամների ընտրության մասին,

2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին,

3) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովն առանձին արձանագրություններով 24.12.2022 թվականին ամփոփել են վերը նշված օրակարգային հարցերով ընդհանուր ժողովի արդյունքները:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի 24.12.2022 թվականի արձանագրությունների՝ **ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 2541 փաստաբանից**, ըստ ընտրական ցուցակի ստորագրությունների՝ **քվեաթերթիկ են ստացել 984 փաստաբան (38.7%)**:

Ժողովի արդյունքներով ընտրվել են Պալատի կարգապահական հանձնաժողովի անդամները: Քվեարկությանը մասնակցած փաստաբանների 82.2 տոկոս կողմ ձայներով որոշվել է հաստատել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությունը նոր խմբագրությամբ, իսկ 82,3 տոկոս կողմ ձայներով Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխությունները և լրացումները:

➢ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2022 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակում) աշխատել է **134 անձ**, որից՝

1. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմում՝ 24 աշխատող[1].
2. Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմում՝ 17 աշխատող.
3. Հանրային պաշտպան՝ Երևան քաղաքում և մարզերում՝ 93 աշխատող (այդ թվում՝ ոչ լրիվ դրույքաչափերով աշխատող հանրային պաշտպանները):



2022 թվականին գործող փաստաբանների թիվը

2022 թվականի դեկտեմբերի դրությամբ գործող փաստաբանների թիվը կազմել է **2541**, որից 1117-ը՝ կին փաստաբան (44%), իսկ 1424-ը՝ տղամարդ փաստաբան (56%):

[1] ՀՀ փաստաբանների պալատի 24 հաստիքներից 9-ի աշխատավարձի դրույքաչափի 50%-ը վճարվում է պետական բյուջեի մասին համապատասխան օրենքով հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման համար հատկացված գումարից, քանի որ այդ հաստիքների գործառույթներն ուղղված են նաև հանրային պաշտպանի գրասենյակի սպասարկմանը:



Կասեցված արտոնագրով փաստաբանների թիվը կազմել է 569 փաստաբան:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար նախապես կազմվում և Փաստաբանների պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացվում համապատասխան տարվա տարեկան բյուջեն, որտեղ առանձին հոդվածներով արտացոլված են տվյալ տարվա համար կանխատեսվող դրամական մուտքերը (եկամուտները) և հնարավոր ծախսային ուղղությունները:

Յուրաքանչյուր տարի Փաստաբանների պալատի նախագահի կողմից Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանն է ներկայացվում տարեկան բյուջեի կատարողական հաշվետվությունը:

2017 թվականից սկսած Փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը ներկայացվում է առավել մանրամասն հաշվետվություն, որտեղ արտացոլված են Փաստաբանների պալատի հաշվետու տարվա եկամուտների (մուտքերի) վերլուծությունը, ծախսերի ընդհանուր վերլուծությունը, ինչպես նաև հաշվետու տարվա ծախսերի վերլուծությունն ըստ տարեկան բյուջեով նախատեսված

տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունն ապահովվում է կայքում առկա «Հաշվետվություններ» բաժնում *(որը տեսանելի է միայն փաստաբանների համար)* Փաստաբանների պալատի ֆինանսական հաշվետվությունները հրապարակելով, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր փաստաբանի ծանոթանալու Փաստաբանների պալատի ֆինանսական շարժին:

Վերը նշված գործողություններն իրականացվել են նաև 2022 թվականին:

➢ ՄԱՐԶԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի 2022 թվականի հունիսի 13-ի որոշմամբ մարզային համակարգողների ընտրություններն անցկացնելու նպատակով, մասնավորապես՝ մարզերում մարզային համակարգողների թեկնածուներին գրանցելու, քվեարկությունները կազմակերպելու և ընտրությունների արդյունքներն ամփոփելու համար կազմավորվել է Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերի մարզային հաշվիչ հանձնաժողով՝ երկու տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի 2022 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության **մի շարք մարզերում ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողների ընտրության կապակցությամբ հրավիրվել է փաստաբանների ժողով** (մարզերի փաստաբանների համատեղ հավաք)[2]:

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզերում մարզային համակարգողների 2022 թվականի ընտրությունների կապակցությամբ գրանցվել են 8 թեկնածուներ:[3]

Շիրակի, Լոռու, Արարատի, Սյունիքի, Տավուշի, Արմավիրի և Կոտայքի մարզերում մարզային համակարգողների ընտրություններին ընդառաջ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտն ամբողջացրել և խմբագրել է նշված մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների ցուցակները (ընտրողների ցուցակներ), որոնք ներկայացվել են ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում[4]:

2022թ. հունիսի 29-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում տեղի է ունեցել Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի,

---

[2] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3154.html*

[3] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3159.html*

[4] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3172.html*

Տավուշի մարզերում մարզային համակարգողների 2022 թվականի ընտրությունների քվեաթերթիկների տպագրությունը[5]:

Հուլիսի 01-ից 05-ն ընկած ժամանակահատվածում տեղի են ունեցել մարզային համակարգողի ընտրություններ, որոնց արդյունքներով **Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արարատի, Տավուշի, Արմավիրի և Կոտայքի մարզերում երկու տարի ժամկետով ընտրվել են մարզային համակարգողներ:**

➢ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի պատվիրակությունը՝ Սիմոն Բաբայանի, Արա Զոհրաբյանի, Գևորգ Մկրտչյանի և Փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի այլ ներկայացուցիչների կազմով այցելել է Արցախի Հանրապետություն և հանդիպումներ ունեցել Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Օլյա Ալթունյանի, Արցախի Փաստաբանական դպրոցի տնօրեն Էրիկ Բեգլարյանի և այլ ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու Պալատների միջև համագործակցության արդյունքներն ու հետագա գործունեության ընթացքը՝ ի նպաստ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների փաստաբանության զարգացմանն ու ամրապնդմանը[6]:

II. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ

[5] *(հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3175.html*

[6] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3190.html*

ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ) ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանության՝ որպես արդարադատության համակարգի ինստիտուտի զարգացման և մասնագիտության նկատմամբ հարգանքի ձևավորման համար կարևորագույն նախադրյալ է հանդիսանում Փաստաբանների պալատի անդամ փաստաբանների իրավունքների պաշտպանության ապահովումն, ինչպես նաև այդ իրավունքների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը:

ՀՀ փաստաբանների պալատը կարևորելով փաստաբանական գործունեության անխոչընդոտ իրականացման ապահովման անհրաժեշտությունն ու արտաքին միջամտությունների բացառումը, ստանձնել է այդ ուղղությամբ բոլոր անհրաժեշտ միջոցառումներն անցկացնելու և դրանց մասին տեղեկատվության մատչելիությունն ապահովելու առաքելությունը:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ, ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022 թվականի հոկտեմբերի 17-ին Փաստաբանների պալատը տեղեկացվել է փաստաբանի ձերբակալման մասին, որի կապակցությամբ Պալատի նախագահը այցելել է փաստաբանին: Փաստաբանի հետ քննարկվել են պաշտպանության կազմակերպմանն առնչվող հարցերը, վերջինս հայտնել է, որ այն կիրականացվի իր կողմից ընտրված փաստաբանների միջոցով: Նույն օրը Փաստաբանների պալատի մամուլի ծառայությունը հայտարարություն է տարածել փաստաբանի ձերբակալման վերաբերյալ: Նկատի ունենալով, որ առաջադրված մեղադրանքն առնչվել է փաստաբանի մասնագիտական գործունեությանը՝ քրեական վարույթի իրավական ընթացքը գտնվել է Փաստաբանների պալատի ուշադրության կենտրոնում[7]:

Փաստաբանի կալանավորման մասին տեղեկացվելուց անմիջապես հետո ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպվել է քննարկում վերջինիս փաստաբանական խմբի հետ:

Պաշտպանական խումբը հաղորդել է, որ փաստաբանի նկատմամբ քրեական հետապնդումն իրականացվում է իր մասնագիտական գործունեության շրջանակներում փաստաբանի կատարած օրինական գործողությունների համար:

[7] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝* https://advocates.am/news/view/3257.html

Այդ մասին հայտարարել է նաև փաստաբանը զանգվածային լրատվության միջոցների հետ շփումների ընթացքում:

ՀՀ փաստաբանների պալատը **2022 թվականի հոկտեմբերի 20-ին** հայտարարություն է տարածել, որով **դատապարտել է փաստաբանի նկատմամբ հետապնդման ցանկացած տեսակի իրականացումը, առավել ևս՝ քրեական**, որը կարող է պայմանավորված լինել վերջինիս կողմից իրականացվող օրինական մասնագիտական գործունեությամբ: Հայտարարությամբ Փաստաբանների պալատը հիշեցրել է, որ փաստաբանի անկախությունը վերջինիս մասնագիտական գործունեության առանցքային հիմքերից է, այն անհրաժեշտ նախապայման է ժողովրդավարական հասարակության մեջ երաշխավորելու անձանց իրավունքների պաշտպանությունը:

Միաժամանակ, Պալատն ընդգծել է, որ փաստաբանի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև նրա վստահորդների իրավունքների պաշտպանության հարցերը[8]:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

2022 թվականի հոկտեմբերի 20-ին կալանավորված փաստաբանի պաշտպանական խմբի հետ ՀՀ փաստաբանների պալատում տեղի ունեցած քննարկումից հետո, վերջիններս Փաստաբանների պալատ դիմում են մուտքագրել՝ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովում հարցը քննարկելու համար:

Հիմք ընդունելով փաստաբանի պաշտպանի դիմումը և տեղեկատվության հրապարակային աղբյուրներում առկա տվյալները՝ ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը **հրատապ՝ 2022 թվականի հոկտեմբերի 20-ին** քննարկել է փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման և կալանավորման հարցը:

[8] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3262.html*

2022 թվականի հոկտեմբերի 25-ին Պալատը տարածել է ծավալուն հաղորդագրություն, որով ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի հոկտեմբերի 20-ի քննարկման արդյունքները՝ Պալատի դիրքորոշումը փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման և կալանավորման առնչությամբ:

Փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման հարցը Հանձնաժողովը քննարկել է փաստաբանի անկախության և օրինական մասնագիտական գործունեության շրջանակներում գործողությունների ազատության համատեքստում:

Հանձնաժողովը հիշեցրել է, որ փաստաբանի գործունեության օրենսդրորեն ամրագրված առանցքային երաշխիքներից է նրա անկախությունը մասնագիտական գործունեության մեջ: Փաստաբանի անկախությունն անհրաժեշտ պայման է անձանց համար որակյալ իրավաբանական օգնություն երաշխավորելու և ըստ այդմ՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների պաշտպանությունը գործնականում ապահովելու հարցում: Օրենքով ամրագրված է, որ իր մասնագիտական գործունեության մեջ փաստաբանը լիազորված և նույնիսկ պարտավոր է առավելագույնն անել օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի պաշտպանության համար:

Հանձնաժողովը **խիստ մտահոգություն** է արտահայտել փաստաբանի պաշտպանի դիմումում, ինչպես նաև փաստաբանի կողմից զանգվածային լրատվության միջոցներով հայտնած տեղեկությունների առնչությամբ, որ վերջինս քրեական հետապնդման է ենթարկվում բացառապես իր օրինական մասնագիտական գործունեության շրջանակներում իրականացրած գործողությունների համար:

Հանձնաժողովը վերահաստատել է՝ փաստաբանը չի կարող ենթարկվել որևէ հետապնդման իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար:

Այդպիսի գործողությունները խաթարում են մարդու իրավունքների պաշտպանության ամբողջ համակարգը և բացարձակապես անընդունելի են:

Անդրադառնալով փաստաբանի նկատմամբ կիրառված հարկադրանքի միջոցներին, այդ թվում՝ վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելուն՝ Հանձնաժողովն ընդգծել է, որ փաստաբանի մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ՝ պետական մարմիններն իրենց իրավասության սահմաններում գործողություններ նախաձեռնելիս կամ որոշումներ կայացնելիս պետք է հատուկ քննարկման առարկա դարձնեն դրանց հնարավոր բացասական հետևանքները փաստաբանի՝ որպես մասնագիտության հեղինակության վրա: Փաստաբանի հեղինակությանը չվնասելու հարցում առանձնակի հոգատարությունն անհրաժեշտ պայման է անձանց իրավունքների պաշտպանվածության պատշաճ միջավայր ապահովելու համար: **Հասարակության մեջ փաստաբանի դերը նկատի ունենալով՝ նրա նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելը, լինի դա վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնել, թե՝ կալանավորում, պետք է լինի ծայրահեղ միջոց, և այն պետք է գործնականում կատարվի վերը նշված պահանջներն ուղենիշ ունենալով**:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը նշվել է, որ փաստաբանի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննարկելիս պետք է ուշադրության կենտրոնում ունենալ նաև նրա վստահորդների իրավունքների պաշտպանության հարցերը: Մասնավորապես, փաստաբանի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրվելու դեպքում նրա վստահորդների՝ իր նախընտրած փաստաբանի միջոցով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից զրկվելու հանգամանքը:

Հանձնաժողովն ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ նշված չափանիշներից ելնելով՝ քրեական վարույթի հանրային մասնակիցները պետք է առավելագույն հաշվետու լինեն փաստաբանի վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու և կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորելու հարցում: Պետք է շատ ծանրակշիռ հիմքեր լինեին, որպեսզի, վերը նշված չափանիշների պայմաններում, հիմնավորվեր, որ քրեական վարույթը չէր կարող իրականացվել առանց փաստաբանի մեկուսացման և փաստաբանի նկատմամբ կիրառվեր ամենածանր խափանման միջոցը՝ կալանքը:

Դրան զուգահեռ, Հանձնաժողովը **խիստ մտահոգիչ է** համարել տեղեկատվության հրապարակային աղբյուրներում առկա տվյալները փաստաբանի վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու գործողության ժամանակ անհամաչափ ուժի կիրառման վերաբերյալ: Նշել է, որ ընդհանրապես հանրային իշխանության ներկայացուցիչների կողմից

անհամաչափ ուժի կիրառումն ընդունելի չէ յուրաքանչյուր պարագայում, բայց վերը նշված հիմնավորումների համատեքստում խնդիրն առավել սուր է փաստաբանի դեպքում: Իրավասու մարմինները պետք է հետևողական քննության առարկա դարձնեն առկա տեղեկությունները, և իշխանազանցում թույլ տված պաշտոնատար անձինք ենթարկվեն արարքին համարժեք պատասխանատվության: Դրան զուգահեռ, անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել նմանատիպ դեպքերն ի սպառ բացառելու ուղղությամբ:

Փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման և կալանավորման հարցը քննարկելու ընթացքում՝ 2022թ. հոկտեմբերի 24-ին վերջինիս պաշտպանը հրապարակում էր տարածել այն մասին, որ փաստաբանի անձնական խուզարկությամբ նրա մոտից առգրավվել է էլեկտրոնային կրիչ հեռախոսը, որի վրա գրառված է եղել տեղեկատվություն, այդ թվում՝ փաստաբանական գաղտնիք պարունակող: Նշել է, որ սա նկատի ունենալով, արդեն չորս օր առաջ դիմել է նախաքննական մարմնին փաստաբանական գաղտնիք պարունակող կրիչն անհապաղ վերադարձնելու պահանջով, սակայն որևէ արձագանք քրեական վարույթն իրականացնող մարմնից չի ստացել:

Այս կապակցությամբ Հանձնաժողովը հիշեցրել է, որ «Փաստաբանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի իրավակարգավորումները:

Հանձնաժողովն ընդգծել է, որ գաղտնիությունը փաստաբանի գործունեության էությունն է: Նշված նորմերը կոչված են երաշխավորելու վստահորդների հետ ցանկացած հարաբերությունների ու խորհրդատվությունների գաղտնի բնույթը՝ փաստաբանի մասնագիտական պարտականությունները կատարելիս:

Հանձնաժողովը նաև հիշեցրել է, որ փաստաբանի մոտ կամ փաստաբանական գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և կրիչներն անձեռնմխելի են, դրանք գտնվում են օրենքի պաշտպանության ներքո:

Փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ոտնձգությունների անթույլատրելիության հարցին, այդ թվում՝ միջազգային չափանիշներին, Հանձնաժողովը բազմիցս անդրադարձել է իր նախորդ հայտարարություններով: Վերահաստատելով իր դիրքորոշումն արձանագրել է, որ այդ չափանիշները պետությանը պարտավորեցնում են ապահովել փաստաբանական գաղտնիքի անձեռնմխելիությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներով արձանագրել է, որ փաստաբանի և իր հաճախորդի միջև նամակագրությունը, անկախ դրա նպատակից ունի արտոնյալ կարգավիճակ, երբ հարցը վերաբերում է գաղտնիությանը, ընդ որում՝ սա կիրառվում է փաստաբանների և իրենց հաճախորդների միջև բոլոր ձևի գրագրությունների նկատմամբ: Դատարանը նաև նշել է, որ մասնագիտական գաղտնիությունը հիմքն է փաստաբանի և հաճախորդի միջև վստահելի հարաբերությունների և դա առանձնահատուկ կշիռ է հաղորդում իրավաբանի մասնագիտական գաղտնիության նկատմամբ ոտնձգության վտանգին, քանի որ այն կարող է հետևանքներ ունենալ արդարադատության պատշաճ իրականացման վրա: Դատարանն արձանագրել է, որ փաստաբանների և իրենց հաճախորդների միջև գրագրության գաղտնիության

ապահովման վիճակից անխուսափելի կախված է բոլորի՝ արդար դատաքննության իրավունքը, ներառյալ մեղադրյալների՝ իրենք իրենց չմեղսագրելու իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը՝

ԽՍՏԱԳՈՒՅՆՍ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է իր օրինական մասնագիտական գործունեության կապակցությամբ փաստաբանի նկատմամբ իրականացվող ցանկացած հետապնդում, առավել ևս՝ իրավունքների սահմանափակման այնպիսի բացառիկ միջոցի կիրառումը, ինչպիսին կալանավորումն է,

ՊԱՀԱՆՋԵԼ Է փաստաբանի վերաբերյալ քրեական վարույթի հանրային մասնակիցներին և ազատությունից զրկելու թույլատրելիությունը քննարկող դատարաններին վերջինիս նկատմամբ հարկադրանքի միջոցներ ընտրելիս կամ կիրառելիս՝ հաշվի առնել նրա որպես փաստաբանի կարգավիճակից բխող առանձնահատկությունները,

ՀՈՐԴՈՐԵԼ Է իրավասու մարմիններին քննության ենթարկել փաստաբանի վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու գործողության ժամանակ անհամաչափ ուժի կիրառման վերաբերյալ տեղեկությունները և իշխանազանցում թույլ տված պաշտոնատար անձանց ենթարկել համարժեք պատասխանատվության,

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ Է փաստաբանի հեռախոսը ողջամտորեն կարող է պարունակել իր վստահորդներին վերաբերող փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ուստի գտնվում է «Փաստաբանության մասին» օրենքի 21-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանության ներքո,

ՀՈՐԴՈՐԵԼ Է քրեական վարույթն իրականացնող մարմնին զերծ մնալ փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ոտնձգություն ենթադրող ցանկացած գործողությունից, այդ թվում՝ փաստաբանի հեռախոսի պարունակությունը բացահայտելուն ուղղված որևէ դատավարական գործողություն կատարելուց, և վերադարձնել այն[9]:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԲԱՑԱՀԱՏՄԱՆ ՎՏԱՆԳԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման շրջանակներում անձնական խուզարկությամբ նախաքննական մարմինն առգրավել է նրա հեռախոսը:

Այդ մասին հրապարակային տեղեկություններ էին տարածել փաստաբանի պաշտպանները՝ նշելով, որ հեռախոսը՝ որպես էլեկտրոնային կրիչ, պարունակում է փաստաբանի վստահորդներին առնչվող փաստաբանական գաղտնիք: Դրան զուգահեռ, փաստաբանի պաշտպանները հավաստի տվյալներ են ներկայացրել Փաստաբանների պալատ առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը պատրաստվում է «փաստաբանական գաղտնիքի երաշխիքների պահպանմամբ» հեռախոսի հետ կապված կատարել վարութային և ապացուցողական այլ գործողություններ, այդ թվում՝ բջջային հեռախոսի թվային խուզարկություն, դրա արդյունքների զննում և այլն:

Այս կապակցությամբ Փաստաբանների պալատը կրկին ընդգծել է, որ **փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ցանկացած ոտնձգություն (փորձ) բացարձակապես անընդունելի է. Փաստաբանների պալատը խստագույնս դատապարտել է այդպիսի գործելակերպը, և նման երևույթներն անթույլատրելի համարել ժողովրդավարական հասարակության մեջ:**

Փաստաբանների պալատը հիշեցրել է, որ գործող օրենսդրությունն **արգելում է** առգրավել (վերցնել) փաստաբանի մոտ կամ փաստաբանական գրասենյակում գտնվող իրավաբանական օգնությանը վերաբերող փաստաթղթերը և կրիչները, ընդգծելով, որ դրանք անձեռնմխելի են, չեն կարող օգտագործվել քրեական վարույթի շրջանակներում և գտնվում են օրենքի խիստ պաշտպանության ներքո:

Նշել է, որ փաստաբանական գաղտնիքի մեջ ներառվում է նաև փաստաբանի և նրա վստահորդի ցանկացած հաղորդակցություն, տեղեկատվության փոխանակում: Գործնականում դա կատարվում է նաև հեռահաղորդակցության միջոցներով, ինչպիսին է հեռախոսը, և ողջամտորեն

[9] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3267.html*

փաստաբանի հեռախոսը պարունակում է այդպիսի տվյալներ: Փաստաբանի հեռախոսը բացառություն չի կազմում:

Պալատն արձանագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն օբյեկտիվորեն հնարավորություն չունի փաստաբանական գաղտնիքի երաշխիքների պահպանմամբ իրականացնելու փաստաբանի հեռախոսի պարունակությունը բացահայտող դատավարական գործողություն, ուստի այդպիսի ցանկացած գործողություն հղի է փաստաբանական գաղտնիքի պաշտպանության իրավական երաշխիքների խախտման վտանգով:

Նշվածը հիմք ընդունելով՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի շրջանակներում կանխելու նախաքննական մարմնի կողմից հեռախոսի պարունակությունը հասանելի դարձնող դատավարական ցանկացած գործողություն և պարտավորեցնելու վերադարձնել հեռախոսը:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազից հայցվել է միջոցներ ձեռնարկել նմանատիպ դեպքերը բացառելու և այդ առումով հավելյալ երաշխիքներ ապահովելու ուղղությամբ[10]:

➢ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

EUROPEAN LAWYERS
EUROPEAN BARS
CCBE
BARREAUX EUROPÉENS
AVOCATS EUROPÉENS

Փաստաբանների պալատը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը: Նշված

10 *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3282.html*

խնդիրը՝ փաստաբանական գաղտնիքի բացահայտման վտանգի, փաստաբանի անկախության և օրինական մասնագիտական գործունեության շրջանակներում գործողությունների ազատության, փաստաբանի՝ որպես մասնագիտության հեղինակության և կոնկրետ փաստաբանի վստահորդների իրավունքների պաշտպանության հարցերի համատեքստում, ՀՀ փաստաբանների պալատը քննարկել է միջազգային գործընկերների հետ, մասնավորապես՝ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդի (CCBE) հարթակում:

Արդյունքում՝ 2022 թվականի նոյեմբերի 15-ին, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE), որի դիտորդ անդամ է Հայաստանը, ուսումնասիրելով առկա տեղեկատվությունը, դիմել է Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին՝ հայտնելով իր մտահոգությունը փաստաբանի ձերբակալության կապակցությամբ և հորդորել նպաստել վերջինիս ազատության վերականգնմանը[11]:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՍՑԵԱԳՐԵԼ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱԿՆԿԱԼԵԼՈՎ ԲԱՑԱՌԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ՉԱՆԳՎԱԾՈՎ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատ էր դիմել ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբան, ով խնդրել էր աջակցություն մեկ այլ փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման առնչությամբ, որի հետ կապված իրականացնում է վերջինիս պաշտպանությունը: Փաստաբանի պնդմամբ մեղադրանքը հիմնված էր բացառապես այն հանգամանքի վրա, որ մինչ իր վստահորդին տեսակցելը վերջինիս խուզարկությամբ արգելված իրեր չեն հայտնաբերվել, մինչդեռ տեսակցությունից հետո հայտնաբերվել են վերը նշված թմրամիջոցները:

Փաստաբանի ներկայացրած հանգամանքները քննարկվել են Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ ենթադրյալ արարքը կապված էր փաստաբանական գործունեության հետ: Դիմումին զուգահեռ, փաստաբանի կողմից ներկայացվել են նաև քրեական գործի նյութերը, որոնք ևս ուսումնասիրվել են:

---

[11] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝* https://advocates.am/news/view/3321.html

Հանձնաժողովը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազին այն մասին, որ փաստաբանի մասնագիտական գործունեությունն իր իրավապաշտպան բնույթով պայմանավորված կարող է ուղեկցվել արտաքին ոչ իրավաչափ ազդեցության վտանգով, ուստի կարիք է զգում հատուկ ուշադրության և անհրաժեշտ երաշխիքների, այդ թվում՝ անհիմն հետապնդումների բացառման հետ կապված:

Փաստաբանի ներկայացրած հանգամանքները Հանձնաժողովի քննարկման առարկա են դարձել այն համատեքստում, որ փաստաբաններն իրենց մասնագիտական գործունեության բնույթով պայմանավորված առնչվում և իրավաբանական օգնություն են ցուցաբերում տարբեր բնույթի և հատկանիշների անձանց: Ընդ որում, այդ օգնությունը որոշ դեպքերում տրամադրվում է հենց քրեակատարողական հիմնարկներում: Ուստի, մեղադրանքի հիմքում դրված փաստերի վերաբերյալ փաստաբանի պնդման պայմաններում վտանգվում է փաստաբանական գործունեությունն համակարգային առումով: Մասնավորապես, այդպիսի դեպքում կստացվի, որ որևէ փաստաբան չի կարող երաշխիք ունենալ, որ իր հետ տեսակցելուց հետո իր վստահորդի մոտ արգելված իր հայտնաբերվելու դեպքում հանիրավի չի ենթարկվի քրեական հետապնդման: Հատկանշական է, որ փաստաբանը որևէ լծակ չունի կանխելու դա կամ ապահովագրվելու նման իրավիճակներից:

Այլ կերպ ասած, Հանձնաժողովը խնդրահարույց է համարել ապացուցման այնպիսի ցածր մակարդակը, երբ փաստաբանի նկատմամբ քրեական հետապնդում կարող է իրականացվել, առավել ևս նախաքննության ավարտով քրեաիրավական գնահատական տրվել նրա կողմից իր վստահորդին արգելված իր փոխանցելու վերաբերյալ միայն այն փաստերի հիման վրա, որ տեսակցությունից առաջ վստահորդի մոտ խուզարկությամբ դրանք չեն հայտնաբերվել, բայց տեսակցությունից հետո հայտնաբերվել են: Այսպիսի պրակտիկան ապագա կամայականությունների վտանգ է ստեղծում, այն ոչ իրավաչափ հնարավորություն է ստեղծում միջամտելու փաստաբանի մասնագիտական գործունեությանը և սառեցնող նշանակություն է ունենում փաստաբանական գործունեության անկախության համատեքստում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը, մտահոգված լինելով նմանատիպ պրակտիկայի առկայության կամ ձևավորման առնչությամբ, խնդրել է ՀՀ գլխավոր դատախազության անմիջական հսկողությունը նշված հարցի առնչությամբ՝ ակնկալելով ՀՀ գլխավոր դատախազության միջամտությունը նմանատիպ դեպքերը բացառելու և այդ առումով հավելյալ երաշխիքներ ապահովելու ուղղությամբ:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՎՐԵԼՈՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆԸ

2022 թվականի մարտի 01-ին ՀՀ փաստաբանների պալատ էր մուտքագրվել փաստաբանի կողմից ներկայացված դիմումն այն մասին, որ քրեական գործի դատական քննության ընթացքում՝ ամբաստանյալի շահերի պաշտպանության առնչությամբ տուժող կողմն իր և իր որդու հասցեին հնչեցրել է սպանության սպառնալիքներ: Այնուհետև նրանցից մեկը դատարանի շենքի բակում հայհոյել և փորձել է հարձակվել իր վրա: Հարձակումը կանխվել է կողմնակի անձանց միջամտությամբ:

Փաստաբանը խնդրել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ փաստաբանների նկատմամբ դրսևորվող վերը նշված սպառնալիքներին օրենքով սահմանված կարգով իրավական գնահատական տալու համար:

Փաստաբանի ներկայացրած հանգամանքները քննարկվել են Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստի շրջանակներում:

Հանձնաժողովի նիստի ընթացքում փաստաբանը հավելյալ տեղեկություններ է ներկայացրել այն մասին, որ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Փաստաբանների պալատը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազին, ընդգծելով, որ փաստաբանի մասնագիտական գործունեությունն ուղղակիորեն առնչվում է անձանց՝ Սահմանադրությամբ և միջազգային հանրաճանաչ փաստաթղթերով ամրագրված պատշաճ իրավաբանական օգնություն ստանալու, իսկ քրեական հետապնդման ենթարկվող անձանց դեպքում՝ նաև պաշտպանության իրավունքին: Ընդգծվել է, որ նշված իրավունքների իրացումը գործնականում դառնում է վերացական և պատրանքային, երբ ապահովված չեն անկախության վրա հիմնված փաստաբանական գործունեության՝ օրենքով նախատեսված երաշխիքները:

Հանձնաժողովն իր մտահոգությունն է արտահայտել փաստաբանի նկատմամբ իր մասնագիտական գործունեության առնչությամբ հնչեցված սպառնալիքների և բռնություն կիրառելու փորձի վերաբերյալ:

Ամբողջացնելով դիրքորոշումը Հանձնաժողովն ընդգծել է, որ արձանագրված դեպքի հետ կապված ակնակալում է, որ ձեռնարկվեն միջոցներ փաստաբանի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:

Միաժամանակ, փաստաբանին իր վստահորդի հետ նույնացնելու արատավոր երևույթները, նրա նկատմամբ իր մասնագիտական գործունեության հետ կապված ճնշումներ գործադրելու և հետապնդելու դեպքերը կանխարգելելու հրամայականով պայմանավորված՝ Հանձնաժողովն իր ակնկալիքն է հայտնել առ այն, որ համապատասխան իրավասու պաշտոնատար անձանց ուշադրությունը կհրավիրվի իրենց պաշտոնեական գործունեության շրջանակներում փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու դեպքերին արդյունավետ արձագանքելու կարևորությանը:

➢ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

2022թ. փետրվարի 25-ին և փետրվարի 28-ին ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել ՀՀ ՔՊ անդամ փաստաբանի դիմումները ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ, որոնք քննարկվել են Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստի ընթացքում:

Փաստաբանը նիստի ընթացքում ներկայացրել է դիրքորոշում՝ միջադեպը չհանրայնացնելու մասին, ինչպես նաև դիմումն անհետևանք թողնելու մասին՝ պայմանավորված ոստիկանության ծառայողների կողմից կատարվածի համար փաստաբանից ներողություն հայցելու հանգամանքով: Հանձնաժողովը որոշում է կայացրել ձեռնպահ մնալ դիմումի կապակցությամբ միջոցներ ձեռնարկելուց:

Միաժամանակ, փաստաբանը տեղեկացվել է, որ միջադեպի հետ կապված հետագա մտահոգիչ զարգացումների դեպքում կրկին կարող է ակնկալել հանձնաժողովի պատրաստակամությունը՝ քննարկման առարկա դարձնելու բարձրացված հարցերը:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՎ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԽՈՉԸՆԴՈՏԵԼԸ

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հրատապ կարգով քննարկել է փաստաբանի ներկայացրած հաղորդումը՝ իր մասնագիտական գործունեությունը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Շենգավիթի բաժնի ծառայողների կողմից խոչընդոտելու վերաբերյալ:

Փաստաբանը, մասնավորապես, հայտնել է, որ նշված բաժնի ծառայողները

տևական ժամանակ (ավելին քան մեկ ժամ) թույլ չեն տվել իրեն մուտք գործել ոստիկանության բաժին՝ իրավաբանական օգնություն ցուցաբերելու ազատությունը սահմանափակված իր վստահորդին: Իրավիճակի վերաբերյալ փաստաբանը հաղորդում է ներկայացրել Ոստիկանության Երևան քաղաքի օպերատիվ կառավարման կենտրոն (1-02) և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ինչպես նաև պարբերաբար տեղեկություններ է հաղորդել բերման ենթարկված քաղաքացիներին առաջնային իրավաբանական օգնություն ցուցաբերելու համար ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված փաստաբանների խմբի համակարգողին:

Ոստիկանության ծառայողները, որպես փաստաբանի մուտքն արգելելու պատճառաբանություն, ներկայացրել են ազատությունը սահմանափակված անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու ցանկություն չունենալը, որն ըստ փաստաբանի՝ հերքվել է վստահորդի հետ առանձնատեսակցության ժամանակ, և ինքը ստանձնել է նրա պաշտպանությունը:

Ավելի ուշ՝ իր վստահորդին ոստիկանության այլ բաժին տեղափոխելուց հետո, ոստիկանության ծառայողները նաև փորձել են խոչընդոտել փաստաբանի ելքը ոստիկանության բաժնի վարչական շենքից:

Փաստաբանի կողմից ներկայացված տեղեկությունները հաստատվել են նաև ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված փաստաբանների խմբի համակարգողից, ինչպես նաև ՄԻՊ աշխատակազմից ստացված տվյալներով:

Հիմք ընդունելով ներկայացված փաստական հանգամանքները, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի կողմից ձևավորված փաստաբանների խմբի համակարգողի կողմից ներկայացված տեղեկությունները վերջին շրջանում ոստիկանության բաժիններ տարատեսակ պատճառաբանություններով փաստաբանների մուտքը խոչընդոտելու դեպքերի մասին՝

ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը՝

- Խստորեն դատապարտել է փաստաբանի մասնագիտական գործունեությունը որևէ եղանակով խոչընդոտելու դրսևորումները՝ հիշեցնելով, որ այդպիսի գործելակերպն ուղղակիորեն վտանգում է անձանց սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքները և ազատությունները,
- Ոստիկանության ծառայողներին հորդորել է խստորեն հետևել օրենսդրական պահանջներին,

- ՀՀ ոստիկանությանը կոչ է արել միջոցներ ձեռնարկել նմանատիպ դեպքերը բացառելու և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ[12]:

III. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ, ՈՉ ՖՈՐՄԱԼ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական գործունեություն իրականացնելիս իրավունքների պաշտպանության շրջանակներում փաստաբաններն առնչվում են տարբեր իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատական համակարգում դրական և բացասական երևույթների հետ: Նշվածով պայմանավորված՝ ձևավորվում է նաև մասնագիտական կարծիք այդ մարմինների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2014 թվականի թիվ 17 կարծիքում նշվել է, որ գնահատումն առանցքային նշանակություն ունի արդարադատության որակի բարձրացման համատեքստում:

Փաստաբանների կողմից դատարանների գնահատման պրակտիկան լայն կիրառություն է գտել նաև ԱՄՆ-ում: Վերոգրյալը նկատի ունենալով՝ ակնառու է, որ համապատասխան չափորոշիչների գործածմամբ, ոչ ֆորմալ գնահատումն ի զորու է իրականացնել նաև ՀՀ փաստաբանական համայնքը, ինչը կնպաստի իրավունքի գերակայության ամրապնդմանը և արդարադատության որակի բարձրացմանը:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ փաստաբանների պալատը որպես փաստաբանական համայնքը համախմբող կառույց՝ որոշում է կայացրել ձեռնարկել միջոցներ ստեղծելու համար իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, քննիչների և մի շարք այլ պաշտոնատար անձանց **միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, օբյեկտիվ գնահատման համակարգ**, որը կնպաստի պետական կառույցների աշխատանքի որակի և արդյունավետության մակարդակի բարձրացմանն ու այդ մարմիններում

[12] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3123.html*

բացասական տարատեսակ երևույթների նվազմանը, որպես արդյունք՝ **բարելավի արդարադատության համակարգը**:

Այս ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են գնահատման համակարգի ստեղծման վերաբերյալ հարցերը, կենսագործման հեռանկարները, ներդրման եղանակները, գործարկման ձևերը, գնահատման համակարգի արդյունավետությունն ու օբյեկտիվությունը, գնահատման չափանիշների տեսակները և մի շարք այլ հարցեր: Ուսումնասիրվել է միջազգային փորձը՝ այլ պետություններում համանման համակարգերի առկայության, դրանց տեսակների, ստացված արդյունքների օբյեկտիվության, ինչպես նաև մի շարք կարևոր և առանցքային հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Քննարկումների արդյունքներով որոշակիացվել են կարևոր մի շարք հիմնահարցեր, որոնք Փաստաբանների պալատի դիտարկմամբ առանցքային են այս համակարգի ստեղծման և կենսագործման համար:

ՀՀ փաստաբանների պալատը կարևորում է արդարադատության համակարգի բարելավմանն ուղղված միջոցների կենսագործումը: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ այս համակարգի ներդրումը զգալիորեն նպաստում է արդարադատության արդյունավետության մակարդակի բարձրացմանը, Փաստաբանների պալատը վճռական է շարունակել նշված ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Առաջիկայում նախատեսվում է առարկայական քննարկումներ իրականացնել միջազգային գործընկերների հետ, այդ համակարգի արդյունավետության, ներդրման մեխանիզմների, դրական և բացասական կողմերի վերաբերյալ: Քննարկումների արդյունքում ակնկալվում է ստանալ նշված հարցերի վերաբերյալ միջազգային փորձի վրա հիմնված առավել մանրամասն տեղեկատվություն:

* * *

IV. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը մշտապես տարաբնույթ նախաձեռնություններ և միջոցառումներ է իրականացրել, որոնք նպաստել են հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանը:

Վերջին տարիներին՝ համավարակով և երկրում ստեղծված պատերազմական իրավիճակով պայմանավորված միջոցառումների պարբերականությունը նվազել է, որպիսի պայմաններում ՀՀ փաստաբանների պալատի 2022-2025 թթ. Ռազմավարական ծրագրում, որպես ոլորտային կարևոր նպատակ ընդգրկվել է այդ միջոցառումների պարբերականությունը վերականգնելը, ավելացնելը և այդ կերպ հասարակության շրջանում փաստաբանի դերն ու հեղինակությունը բարձրացնելը:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼՍԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանական դպրոցում տեղի է ունեցել վաստակավոր իրավաբան, ՀՀ փաստաբանների պալատի առաջին նախագահ **Ռուբեն Սահակյանի** անվան լսարանի բացման արարողությունը:

Միջոցառումը սկսվել է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն **Արա Զոհրաբյանի** ելույթով, ով ողջունելով ներկաներին, ընդգծել է Ռուբեն Սահակյանի վաստակը:

Երախտիքի խոսքով է հանդես եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ **Սիմոն Բաբայանը**՝ *«Ռուբեն Սահակյանի կառավարման ժամանակահատվածում ներդրվեցին ժամանակակից փաստաբանության հիմնաքարերը, և այդ ամենը բնականաբար, պետք է ամրագրվի մեր պատմության մեջ: Կարծում եմ, որ երախտիքի լավագույն միջոցներից մեկը հենց փաստաբանական դարբնոցում իր անվամբ լսարանի հիմնադրումն է, որպեսզի* ***մեր ապագա սերունդներն ու գործընկերները միշտ իրազեկված լինեն այն***

անձանց մասին, ում շնորհիվ այսօր գոյություն ունի փաստաբանական ինստիտուտը» *- ասել է Սիմոն Բաբայանը[13]:*

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ

Փաստաբանների պալատն իրականացրել է իրավական մշակույթի զարգացմանը և առանձին խմբերի անձանց իրավունքների պաշտպանությանը միտված միջոցառում:

[13] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3064.html*

Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել է «Անվճար իրավաբանական օգնություն կանանց» միջոցառումը[14]

Նախաձեռնությանը միացել են «Փաստաբանական դպրոց»-ը, մոտ չորս տասնյակ փաստաբանական գրասենյակներ՝ իրենց թիմերով, ութ տասնյակից ավելի անհատ փաստաբաններ:

Միջոցառումը ևս մեկ առիթ է հանդիսացել ընդգծելու կանանց իրավունքների պաշտպանության կարևորությունը, ինչպես նաև հանրային իրավագիտակցությունը բարձրացնելու գործառույթին փաստաբանական համայնքի հավատարմությունը:

Այն հնարավոր է եղել կյանքի կոչել մասնակիցների՝ հասարակությունում փաստաբանի դերակատարման բարձր գիտակցման, իրենց իրավապաշտպան գործառույթին նվիրվածության շնորհիվ:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Հաշվի առնելով փաստաբանության դերն ու հեղինակությունը բարձրացնելու և պահպանելու կարևորությունը ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանի մասնագիտական օրն ու Հայաստանում փաստաբանության ձևավորման 104-րդ ամյակը նշել է Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում:

Միջոցառման ընթացքում իր շնորհավորական ուղերձում Փաստաբանների պալատի նախագահը շնորհակալություն է հայտնել ՀՀ բոլոր փաստաբաններին՝ փաստաբանի դժվարին առաքելությունը հանձն առնելու և փաստաբանական համայնքի համբավն ու հեղինակությունը բարձր պահելու համար:

Խոսքն ուղղելով ապագա փաստաբաններին՝ Սիմոն Բաբայանը հորդորել է առաջնորդվել անկախությամբ, պարկեշտությամբ և արդարամտությամբ, ինչպես նաև գերնպատակ է համարել՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը:

[14] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3076.html*

Փաստաբանների պալատի կողմից շնորհակալագրերով պարգևատրվել են մի շարք լրատվամիջոցներ՝ փաստաբանական ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության, փաստաբանների հետ արդյունավետ աշխատանքի և իրավական ոլորտի խնդիրները պատշաճ լուսաբանելու համար[15]:

➢ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ փաստաբանների պալատի, Փաստաբանական դպրոցի, Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի գլխավորությամբ **այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին**[16]:

2022թ. դեկտեմբերի 23-ին Փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի ներկայացուցիչներն **այցելել են Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն**, որտեղ խնամքի տակ են գտնվում ծանր հիվանդ երեխաներ, որոնցից ծնողները հրաժարվել են: Մանկատան երեխաներին տրամադրվել են անհրաժեշտ իրեր[17]:

ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն՝ ամեն տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցում՝ հանուն հայրենիքի նահատակված հերոսների ընտանիքներին

- Հայրենիքի պաշտպանության համար զոհված հերոսի հիշատակի օրվա արարողություններին ներկա են գտնվել Փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Զոհրաբյանը, ներկայացուցիչներ Փաստաբանների պալատից և փաստաբանական դպրոցից, հերոսի հարազատները և ընկերները[18]:

- ՀՀ փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի համատեղ նախաձեռնությամբ՝ 2022 թվականի հոկտեմբերի 19-ին,

---

[15] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3312.html*

[16] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3101.html*

[17] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3307.html*

[18] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3212.html*

Սևան քաղաքում իրականացվել է ծառատունկ հայրենիքի պաշտպանության համար զոհված՝ փաստաբան Կարեն Լևոնյանի որդու՝ Լևոն Լևոնյանի անվան պուրակում[19]:

- Հրաչիկ Ավետիսյանի հիշատակը հարգելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական դպրոցի ներկայացուցիչներն այցելել են Եռաբլուր զինվորական պանթեոն[20]:

- ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներն այցելեցին Եռաբլուր զինվորական պանթեոն, խնկարկեցին և ծաղիկներ խոնարհեցին Միքայել Դանիելյանի շիրիմին[21]:

---

19 *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3255.html*

20 *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3258.html*

21 *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3279.html*

2022 թվականի հոկտեմբերի 04-ին ՀՀ փաստաբանների պալատն իր զորակցությունն է հայտնել սպանված հայ ռազմագերիների հարազատներին և **ցուցաբերել պատրաստակամությունն՝** անհրաժեշտ իրավաբանական օգնություն տրամադրելու հարցում[22]**:**

2022 թվականի դեկտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը և Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիան իրենց զորակցությունն են հայտնել Արցախի Հանրապետության ժողովրդին, մասնավորապես Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի անդամներին[23]:

2022 թվականի դեկտեմբերի 19-ին Փաստաբանների պալատը խստագույնս դատապարտել է Ադրբեջանի իշխանությունների գործողություններն՝ Արցախի ժողովրդի նկատմամբ, որի կապակցությամբ հրապարակել է հայտարարություն[24]**:**

V. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական ծառայությունների մատուցման շուկայում իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում պարզվել է, որ առկա է փաստաբանների զբաղվածությանն աջակցելու անհրաժեշտություն՝ հատկապես երիտասարդ և մարզաբնակ փաստաբանների շրջանում: Հաշվի առնելով նշված հանգամանքը **ՀՀ փաստաբանների պալատը ձեռնամուխ է եղել ստեղծել փաստաբանական ծառայությունների պահանջարկ ունեցող տնտեսվարողների էլեկտրոնային հարթակ**, **ինչպես նաև փաստաբանի աշխատուժի պահանջարկ ունեցող փաստաբանական գրասենյակների հարթակ,** որի միջոցով հնարավոր կլինի ապահովել կապն աշխատանք փնտրող

[22] *(հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3245.html*

[23] *(հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3329.html*

[24] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3327.html*

փաստաբանների և փաստաբանական գրասենյակների, ինչպես նաև փաստաբանների և տնտեսվարող սուբյեկտների միջև:

Ի թիվս այլնի՝ նաև այս գաղափարն իրագործելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը **նախաձեռնել է ստեղծել Փաստաբանների պալատի նոր կայքէջ**, որը պետք է ներառի նոր գործիքակազմեր՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ տեղադրելու հնարավորությամբ, որպեսզի փաստաբանական հանրությունը մատչել կերպով կարողանա ծանոթանալ դրանց:

Հաշվետու ժամանակահատվածում այս ուղղությամբ իրականացել են նախապատրաստական աշխատանքներ: Մասնագիտական խմբերի հետ քննարկվել են արդի ռեսուրսների ու դրանց օպտիմալ օգտագործման հնարավորությունները, էլեկտրոնային հարթակի ստեղծման համար անհրաժեշտ ժամկետները, գործիքակազմերը, որոնք պետք է ընդգրկվեն հարթակում՝ փաստաբանների զբաղվածությանն աջակցելուն նպաստելու համար, ինչպես նաև մի շարք այլ առանցքային հարցեր: Այս ուղղությամբ շարունակվում են իրականացվել նախապատրաստական աշխատանքներ:

Էլեկտրոնային հարթակի ստեղծման ուղղությամբ իրականացվող աշխատանքներին զուգահեռ **ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում հավաքագրել և երիտասարդ փաստաբաններին է ուղարկել թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ:**

Փաստաբանների զբաղվածությունը խթանելու և Հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու նպատակով **ՀՀ փաստաբանների պալատը հայտարարել և անց է կացրել մրցույթ**: Մրցույթում հաղթող ճանաչված և հանրային պաշտպանի թեկնածությունների ցուցակում ընդգրկված փաստաբանները 2023 թվականին կարող են նշանակվել հանրային պաշտպանի հաստիքում:

Ինչպես նախկինում, այնպես էլ՝ 2022 թվականին **երիտասարդ փաստաբաններին տրամադրվել է ՀՀ փաստաբանների պալատում գտնվող աշխատասենյակից անվճար օգտվելու հնարավորություն:**

VI. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սույն գլխում ներկայացված են հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման համար կատարված անհրաժեշտ գործողությունները և բարեփոխումները:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2022 թվականին «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում կատարված փոփոխությամբ անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց սոցիալական խմբերն ընդլայնվել են՝ 17-ից դառնալով՝ 20: **Ավելացվել են հետևյալ 3 խմբերը՝**

- օտարերկրացիները՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու,
- անձինք, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ,
- տուժողները, եթե նրանք պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչև 16 տարեկան երեխա:

Հաջորդ կարևոր փոփոխությունն՝ անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց կողմից հայտարարագիր ներկայացնելու կարգավորման ներառումն է: Մասնավորապես, անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար հանրային պաշտպանի գրասենյակ դիմելիս անձը ներկայացնում է գրավոր հայտարարագիր, նույն մասով սահմանված պահանջներին համապատասխանության վերաբերյալ՝ նախազգուշացվելով դրա առնչությամբ քրեական պատասխանատվության մասին:

Օրենսդրական նման կարգավորման նպատակը Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուների կողմից իրենց կարգավիճակի մասին կեղծ տեղեկությունների ներկայացմամբ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելը նախ կանխելն է, այնուհետև՝ պատասխանատվության ենթարկելը:

Օրենքի փոփոխությամբ ներդրվել են նաև հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների, ինչպես նաև այլ անձանց կողմից կամավոր անհատույց և անվճար իրավաբանական օգնության տրամադրման համակարգը:

Կամավոր անհատույց կամ անվճար իրավաբանական օգնությունը կամավոր հիմունքներով իրավաբանական օգնության անհատույց տրամադրումն է անվճար իրավաբանական օգնություն իրավունք ունեցող անձանց: Կամավոր անհատույց և անվճար իրավաբանական օգնություն կարող են տրամադրել փաստաբանները, ինչպես նաև այլ անձինք՝ հաշվի առնելով իրավաբանական օգնություն տրամադրելու օրենսդրական սահմանափակումները:

Պալատի անդամ հանդիսացող յուրաքանչյուր փաստաբան, ինչպես նաև

Պալատում հավատարմագրված այլ պետության փաստաբան կարող է կամավոր ընդգրկվել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական օգնություն տրամադրող՝ հանրային պաշտպան չհանդիսացող անձանց ցուցակում կամ կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով հանրային պաշտպանի գրասենյակ դիմած փաստաբանների ցուցակում:

Նշված ցուցակներում ընդգրկված փաստաբաններին Գրասենյակի ղեկավարը կարող է առաջարկել անվճար իրավաբանական օգնություն տրամադրել Գրասենյակի շահառուին՝ հնարավորինս ներկայացնելով տրամադրման ենթակա իրավաբանական օգնության բնույթը (այնքանով, որքանով առկա են տվյալները և չի խախտվի փաստաբանական գաղտնիքը):

Բացի այդ, հանրային պաշտպանության շահառուներին կամավոր անհատույց անվճար իրավաբանական օգնություն կարող են տրամադրել Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների) օժանդակության միջոցով:

Այսինքն, օրենսդրական փոփոխության արդյունքում, Գրասենյակը՝ «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց հանրային պաշտպանությունը ապահովելու համար կարող է ներգրավել հանրային պաշտպան չհանդիսացող երեք խումբ անձանց միջոցով:

Հատկանշական է նաև, որ կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդի որոշմամբ սահմանվել են խրախուսման միջոցներ, այդ թվում՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից ազատում:

Օրենքի փոփոխությամբ նաև ներդրվել է Գրասենյակի պահուստային ֆոնդ, որի միջոցները կարող են ուղղվել անվճար իրավաբանական օգնություն տրամադրող, հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների վարձատրությանը:

Պահուստային ֆոնդի միջոցները գոյանում են Գրասենյակի կողմից «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով չսահմանված անձանց՝ դիմողի կողմից գրավոր հայտարարագրում կեղծ տվյալներ ներառելու կամ ներկայացման ենթակա տվյալները թաքցնելու պատճառով, վերջինիցս փաստաբանի իրավաբանական օգնության հետ կապված ողջամիտ վճարի գանձման, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՀՊԳ կարիքների բացահայտումը, դրանց բավարարմանն ուղղված համակարգային ռազմավարության մշակումը և իրագործման ուղղությամբ աշխատանքները կրում են մշտական բնույթ:

ՀՊԳ կարիքների գնահատման նպատակով շարունակաբար իրականացվում են թե՛ ընթացիկ, թե՛ տարեկան արդյունքներով ուսումնասիրություններ: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են բերվում այն հիմնական կարիքները, որոնք առաջնային լուծում են պահանջում:

Գրասենյակի գործունեության առաջնային կարիքը հանրային պաշտպանների **գերծանրաբեռնվածության թոթափումն է**: Առաջնային լուծման կարևորություն ունի նաև **«Էլեկտրոնային հանրային պաշտպան»** համակարգի արդիականացումը:

Յուրաքանչյուր տարի գրանցվում է հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության կայուն աճ, ընդ որում՝ բավականին զգալի:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության շարունակական աճը պայմանավորված է գրասենյակի կողմից վարվող գործերի քանակի՝ յուրաքանչյուր տարի արձանագրվող կայուն աճի պայմաններում հանրային պաշտպանների հաստիքների տարիներ շարունակվող անփոփոխ թվով:

Ընդ որում, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված իրավիճակը պայմանավորված է ինչպես անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու քաղաքացիների և պետական մարմինների դիմումների կայուն աճով, այնպես էլ օրենսդրական փոփոխությունների արդյունքում իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող շահառուների խմբերի ընդլայնմամբ:

Ինչպես նշվեց՝ 2022 թվականին «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված քաղաքացիների շրջանակը ընդլայնվել է: Ներկայումս քաղաքացիների դիմումների հիման վրա անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվում ստորև թվարկված սոցիալական խմբերի մեջ մտնող անձանց:

«Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց սոցիալական խմբերն են՝

1. օրենքով սահմանված կարգով հաստատված՝ զինվորական

ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները,

2. 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները,
3. դատապարտյալները,
4. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամները,
5. Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցները,
6. գործազուրկները,
7. միայնակ բնակվող կենսաթոշակառուները,
8. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք,
9. փախստականները,
10. Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածները,
11. անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով՝ անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որի ամսական եկամուտը չի գերազանցում «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի կրկնապատիկը, որը չունի համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց,
12. հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք,
13. օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձինք,
14. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները,

15. խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով,
16. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընտանիքում բռնության ենթարկված անձինք,
17. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողները,
18. օտարերկրացիները՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար,
19. անձինք, որոնց վերաբերյալ իրականացվում է անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, անգործունակ ճանաչված քաղաքացուն գործունակ ճանաչելու կամ քաղաքացու գործունակության սահմանափակումները վերացնելու գործերի վարույթ,
20. տուժողները, եթե նրանք պարտադիր ժամկետային զինծառայող են կամ մինչև 16 տարեկան երեխա:

Հատկանշական է այն հանգամանքը, որ շահառու խմբերի ավելացումը էլ ավելի է ծանրաբեռնել Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքը:

Նշված իրավիճակը Պալատի գնահատմամբ կարող է շտկվել միայն Հանրային պաշտպանի գրասենյակին հանրային պաշտպանների լրացուցիչ հաստիքներ տրամադրելու միջոցով:

Հարկ է նշել, որ «Դատաիրավական բարեփոխումների» 2022-2026 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրում նախատեսվել է հանրային պաշտպանների թվակազմի ավելացում:

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշման **թիվ 1 հավելվածով նախատեսվել է ավելացնել** հանրային պաշտպանի գրասենյակի գործող հաստիքների քանակը: Մասնավորապես 2022 թվականի երկրորդ կեսից հետո հատկացված լրացուցիչ ֆինանսավորմամբ հնարավոր է եղել ապահովել ևս 10 հանրային պաշտպանի հաստիք՝ դրանք հասցնելով 69-ի:

➢ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

2022 թվականի ընթացքում ՀՊԳ-ն ունեցել է մի շարք համագործակցություններ, որոնց շրջանակներում ՀՊԳ-ին նվիրաբերվել է գույք, իսկ որոշների դեպքում կազմակերպվել է սեմինար-քննարկում:

Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության կառավարությունների միջև 2022թ.-ի հունիսի 11-ին ստորագրված նամակ-համաձայնագրի շրջանակներում ՀՊԳ-ին է նվիրաբերվել 3 համակարգիչ, 3 մոնիտոր և 1 տպիչ սարք, նշված սարքավորումների տրամադրումը նպատակ է ունեցել զարգացնել ՀՊԳ կարողությունները և ապահովել վերջինիս մասնագիտական մեկնարկը:

ՄԱԿ-ի Փախստականների հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցության արդյունքում Հանրային պաշտպանի գրասենյակին նվիրաբերվել է 8 դյուրակիր համակարգիչ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Փաստաբանների պալատի և ՀՀ-ում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակում՝ ապաստան հայցողների և փախստականների համար առավել որակյալ և հասանելի իրավաբանական օգնության ապահովման նպատակով նշանակվել է խորհրդատու-փորձագետ, ով հանրային պաշտպաններին աջակցել է հետևյալ հարցերով՝

- *խորհրդատվության տրամադրում և փորձագիտական աջակցություն՝ փախստականների իրավունքի և մարդու իրավունքների չափանիշներին առնչվող իրավական և ընթացակարգային հարցերի վերաբերյալ, ներառյալ՝ ՄԱԿ ՓԳՀ դիրքորոշումների և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի վերաբերյալ, այդ թվում՝ իրավական փաստաթղթերի մշակման փուլում,*
- *ծագման երկրի վերաբերյալ անհրաժեշտ, վերաբերելի, վստահելի աղբյուրներից ձեռք բերված և արդի տեղեկատվության ստացման և պատշաճ օգտագործման հարցում աջակցություն,*
- *աշխատանքային ուղեցույցներով ապահովում՝ ըստ քաղաքացիաիրավական և քրեաիրավական մասնագիտացումների, վերապատրաստում և մենթորություն ապաստանի ոլորտի հարցերով:*

Նշված համագործակցության, ինչպես նաև «Առաքելություն Հայաստան» բարեգործական կազմակերպության հետ համատեղ ապաստանի ոլորտում

իրավաբանական ծառայություններ մատուցողների համար «**Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգում ծագման երկրի տեղեկության դերի մասին**» թեմայով 2022 թվականին իրականացվել են սեմինար քննարկումներ:

➢ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՍՏԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Գրասենյակը, բացի Երևանից, 19 մարզային նստավայրեր ունի նաև հանրապետության գրեթե բոլոր խոշոր քաղաքային բնակավայրերում, ինչը հնարավորություն է ընձեռում բոլոր մարզերում իրավաբանական օգնություն տրամադրելու:

Կախված համապատասխան մարզում և/կամ մարզի քաղաքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկից, նախատեսված է հանրային պաշտպանի ոչ միայն 1 լրիվ, այլ նաև 0,5 և 0,25 դրույքներ: Ընթացիկ ուսումնասիրության արդյունքում կատարվում են հանրային պաշտպանների

հաստիքների վերաբաշխում՝ հաշվի առնելով համապատասխան տարածքում անվճար իրավաբանական օգնության պահանջարկը, ինչպես նաև դատարանների և վարույթն իրականացնող մարմինների նստավայրերի տեղակայումը, շահերի բախման առաջացման վտանգը:

Մարզերում իրավաբանական օգնության պատշաճ որակն ապահովելու նպատակով՝ մարզերը սպասարկող հանրային պաշտպանները պարտադիր մասնակցում են Փաստաբանների պալատի կողմից իրականացվող վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև մասնակից են դարձվում հանրային պաշտպանների մասնագիտական հմտությունները զարգացնելու նպատակով՝ տարբեր հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ հանրային պաշտպանների համար կազմակերպվող առանձին խումբ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ թիրախային դասընթացներին, անձնական կարողությունների զարգացման ծրագրերին և մասնագիտական քննարկումներին:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (PRO BONO) ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒ ԱՅԴ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Չնայած հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը մեղմելու համար առանցքային նշանակություն ունի լրացուցիչ հաստիքների տրամադրումը՝ Պալատի կողմից, դեռևս մինչ օրենսդրական փոփոխությունները, ձեռնարկվել են հավելյալ միջոցներ ստեղծված վիճակը այլընտրանքային լուծումներով շտկելու ուղղությամբ:

Մասնավորապես, Հանրային պաշտպանի գրասենյակում գործում է «Պրո Բոնո» ծրագիրը: Դրա մոդելը 2022 թվականին ներմուծվել է «Փաստաբանության մասին» օրենք:

Այս ծրագրի շրջանակներում անհատ փաստաբաններն առանձին գործերով իրավաբանական օգնություն են ցուցաբերում գրասենյակի շահառուներին, ինչի դիմաց Պալատը նրանց տրամադրում է աշխատասենյակ և աշխատանքային անհրաժեշտ պարագաներ: Այս գործիքը Երևան քաղաքում որոշակի դրական ազդեցություն է ունեցել գրասենյակի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու հարցում, միաժամանակ հնարավորություն է տվել երիտասարդ փաստաբաններին հաղթահարել գործունեությունը սկսելու սկզբում առաջացող տեխնիկական և

նյութական դժվարությունները:

Ծրագրին 2022 թվականի առաջին կիսամյակում ներգրավվել է 9-ը փաստաբան, իսկ երկրորդում՝ 10-ը: Հատկանշական է, որ ծրագրում ընդգրկված փաստաբաններից մի քանիսը հետագայում նաև հանրային պաշտպանի թափուր հաստիքները համալրելու նպատակով անցկացված մրցույթի արդյունքներով նշանակվել են հանրային պաշտպաններ:

Հաշվի առնելով հատկապես քաղաքացիական գործերով բնակչության անվճար իրավական օգնության պահանջարկը, Փաստաբանների պալատը Փաստաբանական դպրոցի իրավաբանական կլինիկայի հետ համատեղ 2022 թվականին նույնպես իրականացրել է քաղաքացիներին անվճար իրավական խորհրդատվության տրամադրման ծրագիր:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում Փաստաբանների պալատում յուրաքանչյուր հինգշաբթի օր անվճար խորհրդատվություն է տրամադրվել Փաստաբանական դպրոցի (ակադեմիայի) ունկնդիրների մասնակցությամբ:

Գրասենյակի գերծանրաբեռնվածության խնդիրը այլընտրանքային լուծումներով շտկելու նպատակով Պալատը մշտապես համագործակցություն է փնտրել գրասենյակի կարողությունները զարգացնելու հարցում շահագրգիռ և գրասենյակի հետ համագործակցության պատրաստ միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար: Հարկ է նկատել, որ այդ ծրագրերը ևս կարող են առավել արդյունավետ լինել և հաջողված արդյունքներ գրանցել, եթե գրասենյակը կաշկանդված չլինի օրենսդրական մակարդակի մի շարք սահմանափակումներով:

VII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ (LOW BONO) ՆԵՐԴՐՈՒՄ

Ժամանակակից իրավունքի զարգացման միտումները վկայում են այն մասին, որ մասնագիտական աջակցության կարիք են ունենում նաև փաստաբանները: Առավել հաճախ նման կարիք առաջանում է երիտասարդ և տարեց փաստաբանների մոտ: Անհրաժեշտ է լինում փորձի փոխանակման, համանման գործեր վարած ավելի փորձառու փաստաբանների հետ խորհրդակցելու:

Երիտասարդ և տարեց փաստաբաններին այս հարցում աջակցելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը առաջին քայլերն է ձեռնարկել LOW

BONO ծրագրի իրականացման ուղղությամբ: Տվյալ ծրագիրը միտված է տարբեր միջոցառումներ կազմակերպելու եղանակով հիշյալ շրջանակի անձանց համար փորձի փոխանակման հարթակ ստեղծելուն:

Այս ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպվել և անց են կացվել մի շարք հանդիպում-քննարկումներ, որոնց մասնակցել են փորձառու մասնագետներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են թեմատիկ տարաբնույթ իրավական հարցեր:

Ծրագիրը մեկնարկել է 2021 թվականի **դեկտեմբերի 22-ին**: Միջոցառման կազմակերպիչը ՓՊ Երիտասարդական խորհուրդն էր: Առաջին հանդիպում-քննարկումը տեղի է ունեցել փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գևորգ Դանիելյանի** և երիտասարդ փաստաբանների մասնակցությամբ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է **«Իրավունքի և օրենքի անալոգիա, կիրառման կանոններ»** թեման:

2022 թվականի **մարտի 30-ին** ՀՀ փաստաբանների պալատում կայացել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու **Տիգրան Մարկոսյանի** և երիտասարդ փաստաբանների հանդիպում-քննարկումը, որը նույնպես կազմակերպվել էր Փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի կողմից:

Հանդիպման ընթացքում ներկայացվել և քննարկվել են **մրցակցության պաշտպանության ոլորտի օրենսդրական փոփոխությունները**:

2022 թվականի **մայիսի 5-ին** ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունենցել քննարկում՝ **«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատաիրավական պրակտիկայի վերջին զարգացումները»** թեմայով: Քննարկումը վարել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներ **Արմեն Հարությունյանը և Թիմ Էյքը:**

2022թ. **մայիսի 27-ին** ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել **«Եվրասիական տնտեսական միության դատարանի գործունեությունը և առանձնահատկությունները, փաստաբանների մասնակցությունը ԵԱՏՄ դատարանում»** թեմայով քննարկում: Քննարկումը վարել է ԵԱՏՄ դատավոր **Արմեն Թումանյանը**:

Նույն թվականի **նոյեմբերի 10-ին** ՀՀ փաստաբանների պալատում **«Հարցաքննության մարտավարությունը տարբեր իրավասությունների դատարաններում. Կատարյալը և իրականությունը»** թեմայով տեղի է ունեցել քննարկում Մոսկվայի, Բեռլինի փաստաբանների պալատների փաստաբան, Ռուսաստանի փաստաբանների գիլդիայի նախագահի տեղակալ, Աշխատանքի և սոցիալական հարաբերությունների ակադեմիայի պրոֆեսոր (Մոսկվա), ի.գ.թ. **Ռուբեն Մարգարյանի** և Անգլիայի և Ուելսի բարձրագույն դատարանների

փաստաբան, Լոնդոնի արբիտրների թագավորական ինստիտուտի (CIArb) անդամ, Հաագայի առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի (ICCA) անդամ, Լոնդոնի խորհրդի անդամ, Լոնդոնի ծովային արբիտրների ասոցիացիայի (LMAA) անդամ **Նորայր Բաբաջանյանի** հետ:

Երիտասարդական խորհրդի ուղղորդմամբ երիտասարդ փաստաբանները մասնակցել են 2022 թվականի **մայիսի 30-ին** և **նոյեմբերի 10-ին Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի** կողմից կազմակերպված **առցանց միջոցառումներին,** իսկ դեկտեմբերի 23-ին՝ **Միջազգային առևտրային պալատի Հայաստանյան ազգային կոմիտեի և «Արբիտրաժ» ՍՊԸ-ին կից մշտապես գործող Արբիտրաժային դատարանի** կողմից կազմակերպված կոնֆերանսին:

ՀՀ փաստաբանների պալատի համար առաջնահերթ է իր անդամների կարողությունների և գիտելիքներ կատարելագործումը, ուստի համանման միջոցառումների իրականացումը հետագայում ևս կրելու է շարունակական բնույթ:

VIII. ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ (PRO BONO) ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ (LOW BONO) ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հասարակությունը մշտապես ունեցել է անվճար իրավաբանական աջակցության կարիք: Հաշվի նստելով հասարակության պահանջների հետ ՀՀ փաստաբանների պալատն իր առջև նպատակ է դրել հնարավոր բոլոր միջոցներով նպաստել իր անդամ յուրաքանչյուր փաստաբանի կողմից անվճար

իրավաբանական օգնության և մասնագիտական անվճար աջակցության տրամադրմանը:

Թեև անվճար իրավաբանական օգնություն տրամադրում է գրեթե յուրաքանչյուր փաստաբան, այնուամենայնիվ այս տեսակ հանրօգուտ աշխատանքը Փաստաբանների պալատը անհրաժեշտ է համարել խրախուսել, նախ՝ պահպանելու համար դրա շարունակականությունը, այնուհետև՝ բարձրացնելու ներգրավված փաստաբանների քանակը:

ՀՀ փաստաբանների պալատի կողմից Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են ծավալուն աշխատանքներ անվճար իրավաբանական օգնության ծավալներն ավելացնելու համար արդյունավետ համակարգ ներդնելու ուղղությամբ:

Մասնավորապես, ի կատարումն վերը նշված նպատակի՝ ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ ծավալուն աշխատանքներ է կատարել օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Տևական բանակցությունների և քննարկումների շնորհիվ ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում ընդգրկվել են դրույթներ, որոնք հնարավոր են դարձնում PRO BONO և LOW BONO ծրագրերի արդյունավետ իրագործումը:

Այդ դրույթներով հանդերձ 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվել է ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-366-Ն օրենքը:

Օրենսդրական փոփոխություններով ներդրվել է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակ վարելու, կատարված աշխատանքի վերաբերյալ վերջիններիս կողմից հաշվետվություն ներկայացնելու, նրանց նկատմամբ **խրախուսման միջոցներ** կիրառելու, ինչպես նաև մի շարք այլ կառուցակարգեր:

Խրախուսման միջոցների կիրառման օրենսդրական հնարավորությունը այն գործուն միջոցն է, որի կիրառմամբ Պալատը նախատեսում է հասնել իր առջև դրված նպատակին՝ անվճար իրավաբանական օգնության և մասնագիտական աջակցության քանակի ավելացմանը:

Իրավակարգավորումները գործի դնելու կարգի սահմանումը Օրենքի ուժով վերապահվել է Պալատի խորհրդին:

Օրենսդրական փոփոխությանը զուգահեռ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության մեջ: Այդ նպատակով 2022 թվականի դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստ, որի ընթացքում ի թիվս այլ հարցերի՝ քննարկվել է նաև Կանոնադրությունը փոփոխելու հարցը:

2022թ. դեկտեմբերի 24-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողով, որի ընթացքում քվեարկությանը մասնակցած փաստաբանների 82.2 տոկոս կողմ ձայներով որոշվել է հաստատել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

Օրենքին համահունչ՝ Կանոնադրությամբ սահմանվել են Պալատի խորհրդի լիազորությունները, որոնք կապված են փաստաբանների և փաստաբանական գրասենյակների կողմից անհատույց իրավաբանական օգնության տրամադրման հետ:

«Փաստաբանության մասին» օրենքում խրախուսանքի միջոցներ նախատեսող իրավադրույթների սահմանումը Փաստաբանների պալատի համար կարևոր ձեռքբերում է: Փաստաբանների պալատը մտադիր է հենց այս միջոցի կիրառմամբ բարձրացնել PRO BONO և LOW BONO ծրագրերի արդյունավետությունը:

Առաջիկայում նախատեսվում է սահմանել նաև Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման կարգը:

Ինչպես նախկինում, այնպես էլ 2022 թվականին երիտասարդ փաստաբաններին տրամադրվել է անվճար աշխատասենյակից օգտվելու հնարավորություն: ՀՀ ՓՊ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի կողմից վերջիններիս տրվել է Հանրային պաշտպանի գրասենյակի շահառուներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու հանձնարարություններ: Այս եղանակով Պալատը նպաստել է անվճար իրավաբանական օգնության տրամադրման ծավալների ավելացմանը, ինչպես նաև երիտասարդ փաստաբանների կողմից մասնագիտական փորձառության ձեռքբերմանը:

IX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

ՀՀ փաստաբանների պալատը կարևորում է փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումը, քանի որ դա առանցքային նշանակություն ունի փաստաբանների միասնականության ամրապնդման և միմյանց հանդեպ հարգանքի ձևավորման համար: Վերջին տարիներին երկրում ստեղծված բարդ՝ պատերազմական և համաճարակային իրավիճակով պայմանավորված փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումներին նպաստող մարզամշակութային, ինտելեկտուալ միջոցառումների քանակը նվազել է:

ՀՀ փաստաբանների պալատը հաշվետու ժամանակահատվածում ձգտել **վերականգնել այդ միջոցառումների ինտենսիվությունն ու ավելացնել դրանց թիվը**՝ կազմակերպելով մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփված են սույն գլխում:

➢ ՎՈԼԵՅԲՈԼԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑԱՇԱՐԸ

Փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբի նախաձեռնությամբ **2022 թվականի ապրիլի 2-ին** անցկացվել է վոլեյբոլի մրցաշարը: Մրցաշարին մասնակցել են փաստաբանները և Փաստաբանական դպրոցի ունկնդիրները: Մրցաշարի արդյունքներով թիմերին հանձնվել են հաղթական գավաթներ և պատվոգրեր[25]:

➢ ՄԵՐՁԱՄԱՐՏԻ, ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ԵՎ ՄԱՐՏԱՐՎԵՍՏԻ ՍԵՄԻՆԱՐ-ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ

Մարզամշակութային ակումբը **2022 թվականի ապրիլի 05-ին** իրականացրել է մերձամարտի, ձեռնամարտի և մարտարվեստի սեմինար-մարզումներ:

Միջոցառմանը մասնակցել են փաստաբանները և նրանց ընտանիքի անդամները:

Սեմինարն անցկաց է կացրել Ռուսաստանի Դաշնությունից ժամանած ՌԴ և ՀՀ հատուկ ստորաբաժանումների բազմամյա փորձառու հրահանգիչ, մարտարվեստի և բանակային ձեռնամարտի գիտակ՝ **Արա Շահնազարյանը**[26]:

---

[25] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝* https://www.advocates.am/news/view/3088.html

[26] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝* *https://www.advocates.am/news/view/3089.html*

➢ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ԳԱՎԱԹ 2022»

2022թ. **ապրիլի 16-ին** կազմակերպվել է **«Փաստաբանների շախմատի գավաթ 2022»** մրցաշարը: Մրցաշարին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանները և Փաստաբանական դպրոցի ունկնդիրները:

Մրցաշարում 1-ից 8-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով և մեդալներով[27]:

➢ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Հունիսի 1-ին ընդառաջ փաստաբանների երեխաների համար անցկացվել է նկարչական հմտությունների մրցույթ[28]: Իսկ արդեն **հունիսի 1-ին**

[27] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3091.html , https://www.advocates.am/news/view/3096.html*

[28] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3189.html*

Փաստաբանների պալատում փաստաբանների երեխաների համար կազմակերպվել է հետաքրքիր խաղերով և անակնկալներով լի միջոցառում[29]:

➢ ԲԻԼԻԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԸ

2022 թվականի **սեպտեմբերի 30-ին** ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ անցկացվել է բիլիարդի միջազգային մրցաշարը, որին մասնակցել է նաև Փաստաբանների պալատի թիմը:

Ավելի քան չորս տասնյակ մասնակիցների խաղում լավագույն արդյունքը ցույց է տվել **Փաստաբանների պալատի թիմը՝ նվաճելով պատվավոր առաջին տեղի գավաթը**[30]:

[29] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3141.html*

[30] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3241.html*

X. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կարևորում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացումը:

Այդ նպատակով **ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում** մշտապես հրապարակվում են բոլոր փաստաբանական գրասենյակների տվյալները: Մուտք գործելով **«Գրասենյակներ»** բաժին յուրաքանչյուր այցելու կարող է ծանոթանալ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող գրասենյակների ցանկին: Ցանկը կազմված է այբբենական կարգով:

Կայքում գրասենյակների վերաբերյալ հնարավոր է գտնել անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ փաստաբանական գրասենյակի անվանումը, կազմակերպության ապրանքային նշանը, հասցեն, հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն, կայքի հասցեն, մասնագիտացումը, յուրաքանչյուր փաստաբան մասնակցի մասին տեղեկություն, ինչպես նաև մի շարք այլ տվյալներ:

Հաշվետու ժամանակահատվածում վերը նշված բաժնում ներառվել են նորաբաց փաստաբանական գրասենյակների տվյալները: Յուրաքանչյուր քաղաքացի կամ կազմակերպություն, որը փնտրում է փաստաբան, մատչելի կերպով կարող է ծանոթանալ ոչ միայն փաստաբանների ցուցակին, այլև գործող փաստաբանական գրասենյակների ցանկին և հեշտությամբ գտնել իր համար նախընտրելի փաստաբանական գրասենյակը:

Փաստաբանական գրասենյակների տվյալների հրապարակումը լինելու է շարունակական, քանի որ Փաստաբանների պալատի դիտարկմամբ՝ փաստաբանական գրասենյակների վերաբերյալ տեղեկատվության համակարգված ներկայացումը նպաստում է փաստաբանական գրասենյակների դիմելիության բարձրացմանը, այդպիսով նաև դրանց զարգացմանը:

Բացի այդ, Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում հրապարակվել է նաև «Անվճար իրավաբանական օգնություն կանանց» միջոցառմանը մասնակցած փաստաբանական գրասենյակների ցանկը: Ցանկի հրապարակումը միտված էր ինչպես անվճար իրավաբանական օգնության տրամադրման խրախուսմանը, այնպես էլ փաստաբանական գրասենյակների գործունեության լուսաբանմանը, քաղաքացիների կողմից փաստաբանական գրասենյակներ դիմելու քանակի ավելացմանը:

Առաջիկայում նախատեսվում են այցելություններ փաստաբանական գրասենյակներ, որոնց շրջանակներում Պալատի աշխատակիցները այցելելու են

փաստաբանական գրասենյակներ՝ տեղում ծանոթանալու համար գրասենյակի աշխատանքն, ինչպես նաև գրասենյակի աշխատակիցների հետ քննարկելու համար փաստաբանությանն առնչվող հիմնախնդիրները:

Նախատեսվում է նաև իրականացնել փաստաբանական գրասենյակների ցուցահանդես:

Փաստաբանական գրասենյակներ այցելություններ, ինչպես նաև գրասենյակների ցուցահանդես իրականացնելով, տարբեր տեղեկատվական հարթակներում դրանք լուսաբանելով, Պալատը փորձելու է նպաստել փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացմանը:

XI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փաստաբանների պալատը կարևորում է ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքակազմերի կիրառումը փաստաբանական գործունեության կազմակերպման գործընթացում:

Նման տեխնոլոգիաների և գործիքակազմերի ներդրման և զարգացման ուղղությամբ Պալատն իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ:

Մասնավորապես՝ 2022 թվականին ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների հետ շարունակել է քննարկել էլեկտրոնային արդարադատության համակարգի մշակման աշխատանքները:

Դրան զուգահեռ՝ միջոցներ են ձեռնարկվել նաև Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի կազմակերպման համար նախատեսված էլեկտրոնային հանրային պաշտպանի գրասենյակի տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ նաև Էլեկտրոնային համակարգ) թարմացման վերաբերյալ հայեցակարգ մշակելու ուղղությամբ:

Ինչպես ցանկացած էլեկտրոնային հարթակ, այնպես էլ՝ Հանրային պաշտպանների աշխատանքի կազմակերպման Էլեկտրոնային համակարգը ժամանակի ընթացքում կորցրել է իր արդիականությունը և գործառնականությունը, քանի որ դրա ստեղծումից հետո տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացմանը զուգահեռ Էլեկտրոնային համակարգը փոփոխությունների չի ենթարկվել:

Հանրային պաշտպանի գրասենյակի ամբողջ աշխատանքը՝ սկսած քաղաքացու ներկայացրած դիմումի մուտքագրումից մինչև իրավաբանական օգնության տրամադրումն ավարտելու վերաբերյալ տեղեկատվության գրանցումը կազմակերպվում և վերահսկվում է էլեկտրոնային համակարգի միջոցով:

ՀՀ փաստաբանների պալատը հաշվի առնելով էլեկտրոնային համակարգի կարևորությունը Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, նշված համակարգը զարգացնելու, ժամանակակից գործիքակազմեր ներդնելու, դրանով իսկ Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքը դյուրին դարձնելու համար նախաձեռնել և իրականացրել է քննարկումներ՝ ներպետական մակարդակում: Քննարկումներ են ծավալվել նաև միջազգային գործընկերների հետ:

Կատարված քննարկումները տվել են իրենց դրական արդյունքը՝ մշակվել է էլեկտրոնային համակարգի զարգացման նախնական հայեցակարգը:

Բացի այդ, հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածությունը թոթափելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը մշակել է ծրագիր, որի շրջանակներում հանրային պաշտպանները կկարողանան խնայել որոշակի ժամանակ և ռեսուրսներ, ինչն էլ որոշ չափով կթեթևացնի նրանց աշխատանքային օրվա ծանրաբեռնվածությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկներ այցերը լրացուցիչ ժամանակ և ռեսուրսներ են պահանջում, քանի որ դրանք հիմնականում տեղակայված են Հանրային պաշտպանի գրասենյակի տեղակայման վայրից հեռու, անգամ՝ հանրային պաշտպանի գործունեության տարածքից (քաղաքից) դուրս, ինչպես նաև այն, որ քրեակատարողական հիմնարկ մուտք գործելը և ՔԿՀ աշխատակիցների կողմից անազատության մեջ գտնվող անձին տեսակցության սենյակ (որոնց թիվը սահմանափակ է) տեղափոխելը ևս բավականին շատ ժամանակ է պահանջում, ՀՀ փաստաբանների պալատը մտադրվել է միջոցներ ձեռնարկել նվազեցնելու համար հանրային պաշտպանների կողմից քրեակատարողական հիմնարկներ կատարվող այցերի անհրաժեշտությունը:

Հաշվետու ժամանակահատվածում նշված ծրագիրը կյանքի կոչելու համար իրականացվել են քննարկումներ: Քննարկումների արդյունքներով մշակվել է ծրագրի և դրա ներդրման հայեցակարգը: Ծրագրով նախատեսվում է ժամանակակից գործիքակազմերի միջոցով, գաղտնիության պայմանների պահպանմամբ ստեղծել էլեկտրոնային հարթակ, որտեղ հանրային պաշտպաններն առանց լրացուցիչ ժամանակ և ռեսուրսներ օգտագործելու կկարողանան տեսակցել քրեակատարողական հիմնարկներում գտնվող իրենց վստահորդի հետ:

Ինչպես արդեն նշվեց, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են նաև քննարկումներ փաստաբանական գործունեության կառավարման էլեկտրոնային հարթակի ստեղծման ուղղությամբ: Դրական արդյունքի հասնելու

համար նախատեսվում է 2023 թվականին շարունակել բարձրացնել և տարբեր հարթակներում քննարկման առարկա դարձնել այս հարցը, ինչպես նաև մշակել էլեկտրոնային հարթակի սեղծման և ներդրման հայեցակարգը:

XII. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ուսուցման և փաստաբանների վերապատրաստման բաղադրիչի շրջանակներում կարող ենք արձանագրել, որ թե՛ Փաստաբանական ակադեմիայի, թե՛ ՀՀ փաստաբանների պալատի գործուն ջանքերի շնորհիվ փաստաբանական համայնքն առաջատար դիրքերում է և իր փորձը կիրառվում է շատ երկրներում, այդ թվում՝ զարգացած երկրներում:

Այդուհանդերձ, Փաստաբանների պալատը գտնում է, որ ուսումնական գործընթացը պետք է զարգանա համաժամանակյա ռեժիմով և պարբերաբար կատարելագործվի:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատում շարունակաբար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ: Փաստաբանների պալատում գործում է փաստաբանների վերապատրաստման երեք հարթակ՝ վերապատրաստման դասընթացներ տեղում՝ Փաստաբանների պալատում կամ Փաստաբանական դպրոցում, հեռավար և առցանց (online) վերապատրաստում:

Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

2022 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 110 անվճար դասընթաց՝** ներառյալ հեռավար և առցանց վերապատրաստման դասընթացները, ինչպես նաև ակումբի նիստերը և Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված հաստատությունների կողմից անցկացվող դասընթացները: Դասընթացներին մասնակցել են **1500** փաստաբաններ:

➢ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր կիսամյակի համար Փաստաբանների պալատի նախագահի որոշումներով հաստատվում են շուրջ 200 վերապատրաստման թեմաներ, որոնք առանձնացված են ըստ իրավունքի ճյուղերի՝ քրեական, քաղաքացիական, վարչական և միջազգային իրավունք, ինչպես նաև գիտագործնական և այլ ուղղվածություններին (օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ, ներդրումային ոլորտ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը փաստաբանական գործունեության մեջ, զինծառայողների և, նրանց ընտանքի անդամների իրավունքներ, էլեկտրոնային կառավարման գործիքները, անչափահասների իրավունքների պաշտպանության քրեաիրավական ասպեկտները, անհաղթահարելի ուժը քաղաքացիաիրավական

հարաբերություններում և այլն):

Փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մեծամասնությունը ընտրված են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:

➢ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Փաստաբանների պալատում վերապատրաստման դասընթացների դասընթացավարներն ընտրվում են Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված չափանիշներով:

2020 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 417-Լ Փաստաբանների պալատի նախագահի որոշման թիվ 1 հավելվածով հաստատվել է նոր՝ «***Փաստաբաններին վերապատրաստող դասընթացավարների չափանիշները և դասընթացավարների ընտրության» կարգն,*** ըստ որի՝ փաստաբանը կամ այլ մասնագետը կարող է ընտրվել դասընթացավար, եթե՝

1. *ունի լսարանի հետ աշխատելու հմտություններ,*
2. *ներկայացրել է Պալատի նախագահի հաստատած թեմաներից որևէ մեկի վերաբերյալ դասավանդման առարկայական ծրագիր, և*
3. *ունի՝*

- *առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանական գործունեության ստաժ, կամ*
- *գիտական աստիճան, կամ*
- *դատավորի կարգավիճակ, կամ*
- *դասախոսի կարգավիճակ, կամ*
- *այլ մասնագիտությունների դեպքում՝ 5 (հինգ) տարվա համապատասխան մասնագիտական ստաժ:*

Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա) առարկայի վերապատրաստման դասընթացներ կարող է վարել Պալատի խորհրդի անդամը, որակավորման հանձնաժողովի փաստաբան անդամը, Պալատի աշխատակազմի փաստաբան անդամը, ինչպես նաև Դասընթացավարների ցուցակում ընդգրկված այլ փաստաբանը:

Նույն կարգի համաձայն՝ դասավանդողների ընտրությունը կատարում է Պալատի աշխատակազմի ղեկավարը *(Փաստաբանների պալատի նախագահի 23.12.2020թ. թիվ 417-Լ որոշմամբ ձևավորվում է նաև դասընթացավարների ընտրության փորձագետների խումբ):*

➢ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Փաստաբանների պալատից և Փաստաբանական դպրոցից բացի՝ փաստաբաններին վերապատրաստելու իրավունք է նախատեսվել նաև Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների համար:

Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգը, որով նախատեսվել են վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար կազմակերպություններին հավատարմագիր տալու հստակ չափանիշներ:

Նշված կարգի համաձայն՝ 2022 թվականին փաստաբանների վերապատրաստումը կազմակերպելու համար հավատարմագրվել են հետևյալ կազմակերպությունները.

- ***«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.***
- ***Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ).***
- ***«Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամ.***
- ***«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ.***
- ***«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ***
- ***Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ.***
- ***Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ/UNICEF).***
- ***«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն.***

2022 թվականին Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունները փաստաբանների համար կազմակերպել են շուրջ 8 վերապատրաստման դասընթաց:

➢ ՀԵՌԱՎԱՐ (ԴԻՍՏԱՆՑԻՈՆ) ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին վերապատրաստման դասընթացների մեծ մասն անց է կացվել առկա կամ առկա-հեռավար տարբերակով, իսկ հեռավար տարբերակով անց են կացվել 48 դասընթացներ:

ՀՀ փաստաբանների պալատի և Եվրոպական միության և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ կազմակերպվել է «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք», «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», «Փաստաբանների մարտահրավերները կոռուպցիայի դեմ պայքարում» թեմայով վերապատարստումները:

Դասընթացների նպատակն է եղել Հայաստանում արդարադատության որակի բարելավման համատեքստում բացահայտել քրեադատավարական նոր կարգավորումները և դրանց առանձնահատկությունները փաստաբանների (հանրային պաշտպանների) համար: Տեղի են ունեցել վերը նշված թեմաներով 10-ից ավել վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են շուրջ 400 փաստաբաններ: Դասընթացները վարել են փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հրայր Ղուկասյանը, ծրագրի հակակոռուպցիոն և էթիկայի հարցերի փորձագետ Դիանա Կուրպնիցեն, դասընթացներին մասնակցել է միջազգային փորձագետ Օթիլիա Պակուրարին:

➢ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ. ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

➢ ***Փաստաբանական դպրոցում ուսուցումն իրականացվում է ըստ մասնագիտական ուղղվածության.***

2014 թվականի աշնանային հոսքի ընդունելությունից սկսած Փաստաբանական դպրոցում ուսուցումը կազմակերպվում է ըստ ***քրեաիրավական*** և ***քաղաքացիաիրավական մասնագիտական ուղղվածությունների***, ինչի արդյունքում համապատասխան մասնագիտացում ընտրած ունկնդիրները ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մոտ 90% հարաբերակցությամբ անցնում են նեղ մասնագիտական առարկաներ, օրինակ՝ քրեական ուղղվածության ունկնդիրները քրեաիրավական մասնագիտացման առարկաներ, իսկ մնացած առարկաները հարակից են և կրում են ընդհանուր բնույթ՝ անկախ ունկնդրի մասնագիտացումից, օրինակ՝ փաստաբանի վարքագծի, հոգեբանության հիմունքների, սահմանադրական դատարան ներկայացվող դիմումների հետ կապված առարկաները:

Հաշվետու ժամանակահատվածում Փաստաբանական դպրոցն իրականացրել է երկու ընդունելություն՝ 2022 թվականի գարնանային հոսքի և 2022

թվականի աշնանային հոսքի համար:

2022 թվականի գարնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 115 ունկնդիր, որից՝

ա. քրեաիրավական ուղղվածությամբ՝ **24** (**22** առկա, **2** հեռավար),

բ. քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ՝ **59** (**54** առկա, **5** հեռավար),

գ. հատուկ դիմորդի ուսուցման ծրագրով՝ **32** ունկնդիր (23 առկա, 9 հեռավար):

2022 թվականի աշնանային հոսքի ընդունելության արդյունքներով Դպրոց է ընդունվել և դասընթացներին ներգրավվել թվով 107 ունկնդիր, որից՝

ա. քրեաիրավական ուղղվածությամբ՝ **27** (**22** առկա),

բ. քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածությամբ՝ **66** (**58** առկա, **8** հեռավար),

գ. հատուկ դիմորդի ուսուցման ծրագրով՝ **14** ունկնդիր (**8** առկա, 6 հեռավար):

➢ ***Փաստաբանական դպրոցի ունկնդիրների որակավորման քննությունները.***

Փաստաբանական դպրոցի ունկնդիրների (շրջանավարտների) որակավորման քննություններն անցկացնում է Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը:

Գործող կարգի համաձայն՝ Փաստաբանական դպրոցի ունկնդիրն ավարտելով ուսուցումը դպրոցում, որակավորման քննությանը մասնակցելու նպատակով Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան որակավորման հանձնաժողովին է ներկայացնում սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը:

2022թ. գարնան որակավորման քննություններին մասնակցել է ընդհանուր 87 հավակնորդ:

ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը 08.06.2022թ. կայացած նիստում ամփոփել է 2022թ. գարնան որակավորման քննության արդյունքները, որոնց համաձայն որակավորման քննությունները՝

- հանձնել է 78 հավակնորդ.
- չի հանձնել 9 հավակնորդ:

2022 թվականի աշնանը կազմակերպված որակավորման քննություններն անցկացվել են երկու փուլով՝ առաջին փուլի ընթացքում հավակնորդները կատարել են գրավոր առաջադրանք, իսկ երկրորդ փուլի ընթացքում պատասխանել են քննատոմսի և Հանձնաժողովի անդամների հարցերին:

<u>Քաղաքացիական ուղղվածության</u> շրջանավարտները հանձնել են 2

քննություն՝ գրավոր առաջադրանք՝ հայցադիմումի կազմում, և բանավոր փուլ, որի ընթացքում փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ քննական տոմսում նկարագրված խնդրի վերաբերյալ հավակնորդը ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների նշված խնդրին կամ փաստաբանի վարքագծի վերաբերելի կանոնին առնչվող հարցերին, ինչպես նաև քննական տոմսում նկարագրված մասնագիտական խնդրի վերաբերյալ ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների՝ նշված խնդրին կամ վերաբերելի նորմին (իրավական կարգավորմանը) առնչվող հարցերին:

Քրեական ուղղվածության շրջանավարտները հանձնել են 2 քննություն՝ գրավոր առաջադրանք՝ դատավճռի դեմ վերաքննիչ բողոքի կազմում, և բանավոր փուլ, որի ընթացքում փաստաբանի վարքագծի կանոնների վերաբերյալ քննական տոմսում նկարագրված խնդրի վերաբերյալ հավակնորդը ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների նշված խնդրին կամ փաստաբանի վարքագծի վերաբերելի կանոնին առնչվող հարցերին, ինչպես նաև քննական տոմսում նկարագրված մասնագիտական խնդրի վերաբերյալ ներկայացնում է լուծումը՝ պատճառաբանելով այն և պատասխանելով Հանձնաժողովի անդամների՝ նշված խնդրին կամ վերաբերելի նորմին (իրավական կարգավորմանը) առնչվող հարցերին:

2022թ. աշնանը կազմակերպված որակավորման քննություններին մասնակցել է 106 հավակնորդ:

Որակավորման քննությունները չեն հանձնել 10 աշխատանքների հեղինակներ, իսկ 1 հավակնորդ գրավոր քննության անցկացման կարգի խախտման պատճառով որակավորման հանձնաժողովի կողմից կայացված որոշման արդյունքում հեռացվել է քննությունից: Որակավորման քննություններին տարբեր օրերին չեն ներկայացել ընդհանուր 4 շրջանավարտներ:

Փաստաբանի հավակնորդների երդման արարողությունը.

- ✓ **71** փաստաբանի հավակնորդներ արտոնագիր են ստացել 2022 թվականի հունիսի 25-ին տեղի ունեցած Պալատի խորհրդի հանդիսավոր նիստին:
- ✓ **85** փաստաբանի հավակնորդներ արտոնագիր են ստացել 2022 թվականի դեկտեմբերի 6-ին՝ Հայաստանում փաստաբանության կազմավորման 103 ամյակի օրը:

XIII. ՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այժմ շարունակում է իրականացնել սոցիալական ծրագրեր՝ թիրախավորելով

կարիքավոր և աջակցության կարիք ունեցող փաստաբաններին:

Վերոնշյալով պայմանավորված՝ Փաստաբանների պալատը նախատեսել է հնարավորինս աջակցել կենսաթոշակային տարիքի փաստաբաններին՝ սահմանելով հավելյալ արտոնություններ անդամավճարների մասով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **2022 թվականի հունիսի 21-ի** թիվ 134-Լ որոշմամբ հաստատվել է «80 փաստաբանի **«Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» տրամադրելու մասին» կարգը**:

2022 թվականի հուլիսի 15-ին «Փաստաբան Եզեգելյան օժանդակություն» ծրագրի շրջանակներում 80 փաստաբանի հանձնվել են մեկ տարվա անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր: Հանդիսավոր արարողությանը ներկա են եղել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Զոհրաբյանը, ֆրանսահայ բարերար Ռայմոն Եզեգելյանի կինը՝ Ռագիբ Օռելին, դուստրը՝ Մարի Եզեգելյանը, շահառու փաստաբանները և այլ հյուրեր:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկաներին ներկայացրել է ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, Ֆրանսահայ փաստաբան բարերար Ռայմոն Եզեգելյանի հետ համագործակցության երկարամյա ուղին և նրա նվիրական գործունեության կարևորությունը Փաստաբանների պալատի և հայ փաստաբանների համար[31]:

XIV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

[31] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3195.html*

Փաստաբանական համայնքի և իրավակիրառ ոլորտների ներկայացուցիչների փոխադարձ քննարկման հարթակների առկայության անհրաժեշտությունը պայմանավորված է տարբեր ոլորտում առկա խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ ձևավորելու, կարծիքների փոխանակում իրականացնելու, իրավունքի զարգացմանը նպաստելու հանգամանքներով:

Դատական, գործադիր և օրենսդիր իշխանությունների հետ նմանատիպ կայուն հարթակների արդյունավետության փորձն ապացուցվել է բազմաթիվ անգամներ:

2022 թվականին մինչև «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքի ընդունումը կազմակերպվել են մի շարք քննարկումներ ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի, փաստաբանների, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ԱԺ պետահիրավական հանձնաժողովի, «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչների և նշված օրենքի նախագիծը մշակող փորձագետների մասնակցությամբ:

Տեղի է ունեցել երկօրյա արտագնա հանդիպում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը, արդարադատության նախարարության, օրենսդիր մարմնի ներկայացուցիչները, փաստաբանները:

2022 թվականի հունվարի 13-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը մասնակցել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպված կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման ինստիտուտի արժեզրկման, դատական գործերի «ձեռքով» մակագրման կարգի խախտումների և դրանց վերացման վերաբերյալ օրակարգային հարցերով աշխատանքային քննարկմանը:[32]

2022 թվականի փետրվարի 1-ից 4-ը ՀՀ ՊՆ վարչական համալիրում անցկացվել է զորամիավորումների, զորամասերի և ռազմաուսումնական հաստատությունների սպա-իրավաբանների մասնագիտական հավաք: Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալը հանդես է եկել իրավահասկացողության տիպաբանության համատեքստում՝ իրավունքի և օրենքի հարաբերակցությանը նվիրված զեկույցով[33]

2022թ. սեպտեմբերի 13-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ղեկավարած աշխատախումբը հանդիպում-քննարկում է ունեցել ՀՀ կադաստրի

---

[32] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://www.advocates.am/news/view/3041.html*

[33] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3055.html*

կոմիտեի ղեկավարի և Կոմիտեի իրավասու պաշտոնատար անձանց հետ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ[34]:

XV. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Փաստաբանների պալատի՝ օրենքով ամրագրված խնդիրներից է հանրային իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը նպաստելը: Նշված նպատակի իրագործումն իր հերթին խթանում է հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացումը, փաստաբանի գործունեության իրավապաշտպան բնույթի ընկալման ձևավորումը:

Հաշվետու ժամանակահատվածում հանրային իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ Փաստաբանների պալատը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփ ներկայացված են սույն գլխում:

➢ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Կանանց միջազգային օրվա կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել է «Անվճար իրավաբանական օգնություն կանանց» միջոցառումը:

Միջոցառման շրջանակներում փաստաբանական գրասենյակները, «Փաստաբանական դպրոց»-ի ունկնդիրները և անհատ փաստաբանները 2022թ. մարտի 10-ին և 11-ին հանրապետության ամբողջ տարածքում անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել կանանց:

[34] *հրապարակված է Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ https://advocates.am/news/view/3228.html*

Ինչպես նշվել է նախկինում, այս միջոցառման նպատակն է եղել՝ նպաստել է հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև բարձրացնել հանրային իրազեկվածությունը:

Նախաձեռնությանը միացել են «Փաստաբանական դպրոց»-ը, մոտ 4 տասնյակ փաստաբանական գրասենյակներ՝ իրենց թիմերով, 8 տասնյակից ավելի անհատ փաստաբաններ:

ՀՀ փաստաբանների պալատը ամփոփելով միջոցառման արդյունքները շնորհակալություն է հայտնել դրա մասնակիցներին և վերջիններիս տվյալները պարունակող ցուցակը հրապարակել է Պալատի պաշտոնական կայքէջում, այդ կերպ նպաստելով նաև հետագա միջոցառումներին փաստաբանների ներգրավմանը:

➢ «ՓԱՍՏԱԲԱՆԻ ԽՈՐՀՐԴՈՎ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԸ

2022 թվականին մեկնարկել է **«Փաստաբանի խորհրդով» հաղորդաշարը**, որի նկարահանումներն իրականացվել են Փաստաբանների պալատի գրադարանում: Հաղորդաշարի նպատակն է՝ բարձրացնել հանրության իրավագիտակցությունը, ամենատարբեր իրավական խնդիրների դեպքում բացատրել նրանց անելիքները, իրավունքները և պարտականությունները:

Թողարկվել է թվով **8 հաղորդում**, որոնք հրապարակվել են Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում՝ **«Փաստաբանի խարհրդով»** բաժնում և Յութուբյան ալիքում:

Հաղորդումները նկարահանվել են *«Աշխատող և չաշխատող մայրերի իրավունքները»*, *«Կանայք աշխատանքային իրավահարաբերություններում»*, ***«Քրեական ձերբակալումներ, ձերբակալվողի իրավունքներ»***, ***«Ժառանգության հիմքերը»***, ***«Վարչական ձերբակալումներ, ձերբակալվողի իրավունքներ»***, ***Քաղաքացի-համատիրություն հարաբերությունները»***, ***«Հանրային պաշտպանի գործառույթները»***, ***«Համաձայնեցման և համագործակցության վարույթները»*** **թեմաներով:**



➢ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ճանաչողական այցեր են իրականացվել ՀՀ փաստաբանների պալատ: Պալատը հյուրընկալել է տարբեր համալսարանների, քոլեջների և դպրոցների ունկնդիրներին: Այցերի ժամանակ վերջիններիս ներկայացվել է փաստաբանների դերն ու կարևորությունը արդարադատության համակարգում, ինչպես նաև ոլորտին առնչվող հետաքրքրություն ներկայացնող մանրամասներ:

2022 թվականի փետրվարի 16-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Եվրասիա միջազգային համալսարանի «Եվրասիա» ավագ դպրոցի

հումանիտար հոսքի «Իրավագիտություն» և «Դիվանագիտություն» ենթահոսքերի աշակերտներին:

2022 թվականի մարտի 17-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Հյուսիսային համալսարանի իրավաբանական կլինիկայի ուսանողներին:

2022 թվականի մարտի 20-ին Փաստաբանների պալատ են այցելել ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկայի անդամներ:

Այցի ընթացքում Փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը աշակերտներին և ուսանողներին ներկայացրել է փաստաբանի դերն արդարադատության համակարգում, փաստաբանի գործառույթները, փաստաբան դառնալու ընթացակարգը և անհրաժեշտ պայմանները: Բացի այդ, այցելուներն իրազեկվել են Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի և Փաստաբանական դպրոցի գործառույթների ու կառուցվածքի մասին:

Հանդիպման ավարտին այցելուները շրջել են Փաստաբանների պալատի վարչական շենքում, փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում:

2022 թվականի մայիսի 17-ին Փաստաբանների պալատում հյուրընկալվել են Երևանի թիվ 104 հիմնական դպրոցի աշակերտները:

2022 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հյուրընկալել է Երևանի իրավատնտեսագիտական և կառավարման քոլեջի իրավագիտության բաժնի երրորդ կուրսի ուսանողներին, իսկ նույն թվականի **հոկտեմբերի 19-ին** Երևանի թիվ 83 ավագ դպրոցի հումանիտար՝ պատմաիրավագիտական հոսքի աշակերտներին:

